ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՄԱՆՎԵԼ ԶԱՔԱՐՅԱՆ

ԿՈՄՊԼԵՔՍ ԱՆԱԼԻԶ

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

МАНВЕЛ ЗАКАРЯН

КОМПЛЕКСНЫЙ АНАЛИЗ

(учебно-методическое руководство)

MANVEL ZAKARYAN

COMPLEX ANALYSIS

(testbook)

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ-
ԳՄԴ-

Գրախոս՝ ֆիզմաթ. գիտ. թեկն., պրոֆեսոր Մ. Ի. Կարախանյան

Մ Կոմպլեքս անալիզ (ուսումնամեթոդական ձեռնարկ).- / Մ. Զաքարյան, Եր.: Հեղինակային հրատ., 2024.- 126 էջ:

Մ. Ա. Զաքարյանի «Կոմպլեքս անալիզ» ուսումնամեթոդական ձեռնարկը ընդգրկում է խնդիրներ և առաջադրանքներ, որոնք համապատասխանում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի համանուն ուսումնական ծրագրին: Մատչելի խնդիրների հետ մեկտեղ առաջարկվում են նաև խնդիրներ, որոնք պահանջում են լրացուցիչ գիտելիքներ և ջանքեր: Ձեռնարկը պարունակում է համառոտ տեսական տեղեկություններ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսությունից: Պահպանված է շարադրանքի ուսումնամեթոդական մակարդակը:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև այլ մասնագիտությունների ուսանողների համար, որոնք հետաքրքրված են կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսությամբ:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 978-9939-

© Զաքարյան Մ. Ա., 2024

1. ԿՈՄՊԼԵՔՍ ԹՎԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐԱՆՑ ՀԵՏ

1.1. Սահմանում. $z = x + iy$ տեսքի արտահայտությանը, որտեղ x-ը և y-ը կամայական իրական թվեր են, իսկ i-ն կեղծ միավորը՝ $i^2 = -1$, անվանում են կոմպլեքս թիվ, իսկ այդ թվի $z = x + iy$ տեսքին՝ կոմպլեքս թվի հանրահաշվական տեսք:

x-ը կոչվում է կոմպլեքս թվի իրական մաս և նշանակվում է $x = \operatorname{Re} z$, իսկ y-ը կոչվում է կոմպլեքս թվի կեղծ մաս և նշանակվում է՝ $y = \operatorname{Im} z$;

$\bar{z} = x - iy$ կոմպլեքս թիվը կոչվում է $z = x + iy$ կոմպլեքս թվի համալուծ կոմպլեքս թիվ:

Դիցուք $z_1 = x_1 + iy_1$ և $z_2 = x_2 + iy_2$: Այդ դեպքում՝

1) $z_1 = z_2$ այն և միայն այն դեպքում, երբ $x_1 = x_2$ և $y_1 = y_2$,

2) $z_1 \pm z_2 = (x_1 \pm x_2) + i(y_1 \pm y_2)$,

3) $z_1 z_2 = (x_1 x_2 - y_1 y_2) + i(x_1 y_2 + x_2 y_1)$,

4) $\dfrac{z_1}{z_2} = \dfrac{x_1 + iy_1}{x_2 + iy_2} = \dfrac{(x_1 + iy_1)(x_2 - iy_2)}{(x_2 + iy_2)(x_2 - iy_2)} = \dfrac{x_1 x_2 + y_1 y_2}{x_2^2 + y_2^2} + i\dfrac{x_2 y_1 - x_1 y_2}{x_2^2 + y_2^2}, z_2 \neq 0;$

Յուրաքանչյուր $z = x + iy$ կոմպլեքս թվին համապատասխանության մեջ է դրվում OXY հարթության A(x,y)

ծայրակետով $\overrightarrow{OA}$ վեկտորը, որտեղ O-ն կոորդինատնե-րի սկզբնակետն է (գծ. 1): $\overrightarrow{OA}$ վեկտորի r երկարութ-յունը կոչվում է z կոմպլեքս թվի մոդուլ և նշանակվում է $|z|$ -ով. $|z| = r = \sqrt{x^2 + y^2}$;

$\overrightarrow{OA}$ վեկտորի և OX -երի դրական կիսաառանցքի հետ կազմած անկյունը կոչվում է z կոմպլեքս թվի արգու-մենտ և նշանակվում է՝ $\varphi = Argz$ -ով: $\varphi = Argz$ որոշվում է $2\pi k, k \in Z$ ճշգրտությամբ: $Argz = \arg z + 2\pi k$, $\arg z$ -ը կոչվում է $Argz$ -ի գլխավոր արժեք. $-\pi < \arg z \leq \pi$: Այն որոշվում է հետևյալ բանաձևերով.



գծ. 1

ΔOBA -ից, քանի որ $x = r\cos\varphi, y = r\sin\varphi$, ապա $z = x + iy = r(\cos\varphi + i\sin\varphi)$, որին անվանում են կոմպլեքս

թվի եռանկյունաչափական տեսք: Դիցուք

$z_1 = r_1(\cos\varphi_1 + i\sin\varphi_1), z_2 = r_2(\cos\varphi_2 + i\sin\varphi_2)$: Այդ դեպքում.

1. $z_1 = z_2$ միայն այն դեպքում, երբ

   $r_1 = r_2, \varphi_1 = \varphi_2 + 2\pi k, k \in Z;$

2. $z_1 z_2 = r_1 r_2 \left(\cos\left(\varphi_1 + \varphi_2\right) + i\sin\left(\varphi_1 + \varphi_2\right)\right);$

3. $\dfrac{z_1}{z_2} = \dfrac{r_1}{r_2}\left(\cos\left(\varphi_1 - \varphi_2\right) + i\sin\left(\varphi_1 + \varphi_2\right)\right);$

Վերջին երկու հավասարություններից հետևում են

ա. $\left|z_1 z_2\right| = \left|z_1\right|\left|z_2\right|$; բ. $\left|\dfrac{z_1}{z_2}\right| = \dfrac{\left|z_1\right|}{\left|z_2\right|}$; գ.

$Arg\left(z_1 z_2\right) = Argz_1 + Argz_2$; դ. $Arg\dfrac{z_1}{z_2} = Argz_1 - Argz_2$,

հավասարությունները:

Եթե $z = r\left(\cos\varphi + i\sin\varphi\right)$, ապա

$z^n = r^n\left(\cos n\varphi + i\sin n\varphi\right), n \in N$: Վերջինս կոչվում է Մուավրի բանաձև, որից հետևում է, որ $\left|z^n\right| = \left|z\right|^n$ և

$Argz^n = nArgz + 2\pi k, k \in Z;$

$z = r\left(\cos\varphi + i\sin\varphi\right)$ կոմպլեքս թվից n-րդ աստիճանի կոմպլեքս արմատն ունի n հատ իրարից տարբեր արժեքներ, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով.

$$\sqrt[n]{z}=\sqrt[n]{r}\left[\cos\frac{\varphi+2\pi k}{n}+i\sin\frac{\varphi+2\pi k}{n}\right],\varphi=\arg z,k=0,1,2,\cdots,n-1;$$
(1)

Օրինակ 1.Հաշվել $\sqrt[4]{-1-i}$: Հաշվենք $(-1-i)$-թվի մոդուլը. $|-1-i|=\sqrt{(-1)^2+(-1)^2}=\sqrt{2}$: Հաշվենք $(-1-i)$-թվիարգումենտի գլխավոր արժեքը.

$$\arg(-1-i)=-\pi+arctg\frac{-1}{-1}=-\pi+\frac{\pi}{4}=-\frac{3\pi}{4}:$$

Համաձայն (1) բանաձևի.

$$\sqrt[4]{-1-i}=2^{1/8}\left[\cos\frac{-\frac{3\pi}{4}+2\pi k}{4}+i\sin\frac{-\frac{3\pi}{4}+2\pi k}{4}\right],k=0,1,2,3:$$

$$z_0=2^{1/8}\left(\cos\frac{3\pi}{16}-\sin\frac{3\pi}{16}\right);z_1=2^{1/8}\left(\cos\frac{5\pi}{16}+\sin\frac{5\pi}{16}\right);$$

$$z_2=2^{1/8}\left(\cos\frac{13\pi}{16}+\sin\frac{13\pi}{16}\right);z_3=-2^{1/8}\left(\cos\frac{5\pi}{16}+\sin\frac{5\pi}{16}\right);$$

Օրինակ 2. Հաշվել $\sqrt{3+4i};\sqrt{3+4i}=x+iy;$ Հավասարության երկու մասերը բարձրացնելով քառակուսի կունենանք. $3+4i=x^2-y^2+2xyi$: Հավա-սարացնելով ստացված հավասարության իրական

և կեղծ մասերը, կստանանք. $\begin{cases} x^2-y^2=3 \\ xy=2 \end{cases}$: Լուծելով ստացված հավասարումների համակարգը կստանանք. $x=\pm 2, y=\pm 1$: Հետևաբար

$\sqrt{3+4i}=2+i, \sqrt{3+4i}=-2-i$:

1. Կատարել նշված գործողությունները:

ա. $\frac{1}{i}$ բ. $i^{20}+i^{21}+i^{22}$ գ. $\frac{1-i}{1+i}$ դ. $\frac{1-i\sqrt{2}}{1+i\sqrt{2}}+\frac{1+i\sqrt{2}}{1-i\sqrt{2}}$

2. Ապացուցել հետևյալ հավասարությունները:

ա. $z\cdot\bar{z}=|z|^2$, **բ.** $\overline{\left(\frac{z_1}{z_2}\right)}=\frac{\overline{z_1}}{\overline{z_2}}$, **գ.** $|z_1z_2|=|z_1||z_2|$,

դ. $\overline{(z_1\pm z_2)}=\overline{z_1}\pm\overline{z_2}$,

ե. $|z_1+z_2|^2+|z_1-z_2|^2=2\left(|z_1|^2+|z_2|^2\right)$:

3. Ապացուցել հետևյալ անհավասարությունները:

ա. $|z_1+z_2|\le|z_1|+|z_2|$, **բ.** $|z_1+z_2|\ge\left||z_1|-|z_2|\right|$,

գ. $|z_1-z_2|\ge\left||z_1|-|z_2|\right|$:

4. Ապացուցել, որ $\sqrt[n]{1}$ արմատների արժեքները դասավորված են $O(0,0)$ կենտրոնով միավոր շրջանագծին ներգծված կանոնավոր n- անկյան գագաթներում:

5. Ինչպիսի պայմանների դեպքում **ա.** z_1 և z_2 **բ.** z_1, z_2 և z_3 իրարից տարբեր կոմպլեքս թվերը կգտնվեն մեկ ուղղի վրա:

5.1 Երբ չորս կետեր՝ z_1, z_2, z_3, z_4 ,կգտնվեն միևնույն շրջանագծի վրա:

5.2 Գտնել այն z կետը, որը $z_1 z_2$ հատվածը կբաժանի $\lambda_1 : \lambda_2$ հարաբերությամբ:

5.3. Գտնել z_1, z_2, z_3 գագաթներով եռանկյան միջնագծերի /ծանրության կենտրոնի/ հատման կետը՝ z, եթե **ա.** բոլոր գագաթներում տեղբախշված է հավասար քանակությամբ զանգված. **բ.** Նշված գագաթներում տեղաբախշված են համապատասխանաբար $\lambda_1, \lambda_2, \lambda_3$ զանգվածները:

6. Հաշվել $\sum_{k=0}^{100} i^k$ գումարը:

7. Օգտվելով Մուավրի բանաձևից հաշվել՝

ա. $(1+\cos\varphi + i\sin\varphi)^n$, **բ.** $(1-\cos\varphi + i\sin\varphi)$, որտեղ $n \in N$:

Կատարել նշված գործողությունները տրված կոմպլեքս թվերի հետ:

8. $z_1 = 1+i, z_2 = 1-i;$ **ա.** z_1 / z_2, **բ.** $z_1 z_2^{\,2}$, **գ.** $\sqrt[3]{z_1}$, **դ.** z_2^{102} :

9. $z_1 = 1-i\sqrt{3}, z_2 = 1+i\sqrt{3};$ **ա.** $z_1 \overline{z_2}$, **բ.** z_1 / z_2, **գ.** $\sqrt[4]{z_1}$, **դ.** z_2^{50}

10. $z_1 = 1-i\sqrt{3}, z_2 = \sqrt{3}+i;$ **ա.** $z_1 \overline{z_2}$, **բ.** $\left(\dfrac{\overline{z_1}}{z_2}\right)^2$, **գ.** $\sqrt[3]{z_2}$, **դ.** z_1^{200};

11. $z_1 = 1 + i\sqrt{3},\ z_2 = \sqrt{3} - i;$ **ա.** z_1^3, **բ.** $\frac{z_2}{\overline{z_1}}$, **գ.** $\sqrt[3]{z_1 z_2^2}$, **դ.** $z_1^{180};$

12. $z_1 = 2i,\ z_2 = 1 - 3i;$ **ա.** $\frac{z_1}{z_2}$, **բ.** $\overline{z_1} z_2^2$, **գ.** $\sqrt[3]{z_1}$, **դ.** $z_2^{100};$

13. $z_1 = 1 + i,\ z_2 = 3 - i;$ **ա.** $\overline{z_1 z_2}$, **բ.** $\frac{z_1}{z_2^2}$, **գ.** $\sqrt[4]{z_1}$, **դ.** $z_2^{200};$

14. $z_1 = -1 + i\sqrt{3},\ z_2 -1 + i;$ **ա.** $z_1 \overline{z_2}$, **բ.** $\frac{z_1}{\overline{z_2^2}}$, **գ.** $\sqrt[3]{z_1}$, **դ.** $z_2^{50};$

15. $z_1 = \sqrt{3} + i,\ z_2 = 1 - i\sqrt{3};$ **ա.** $\overline{z_1} z_2$, **բ.** $\frac{z_1^2}{\overline{z_2}}$, **գ.** $\sqrt[4]{z_1}$, **դ.** $z_2^{150};$

16. $z_1 = -2 - 2i,\ z_2 = -2 + 2i;$ **ա.** $z_1 \overline{z_2}$, **բ.** $\left(\frac{z_1}{z_2}\right)^2$, **գ.** $\sqrt[5]{z_1}$, **դ.** $z_2^{120};$

17. $z_1 = -8,\ z_2 = 1 + i;$ **ա.** $\frac{z_1}{\overline{z_2^2}}$, **բ.** $\frac{\overline{z_1^2}}{z_2}$, **գ.** $\sqrt[3]{z_1}$, **դ.** $z_2^{25};$

18. $z_1 = 3 + 3i,\ z_2 = -3 + 3i;$ **ա.** $z_1 \overline{z_2}$, **բ.** $\frac{\overline{z_2}}{z_1}$, **գ.** $\sqrt{z_1}$, **դ.** $z_2^{100};$

19. $z_1 = 6 - 8i,\ z_2 = -i;$ **ա.** $z_1 \overline{z_2^{10}}$, **բ.** $\frac{\overline{z_1}}{z_2}$, **գ.** $\sqrt{z_1}$, **դ.** $z_2^{199};$

20. $z_1 = 4 - 3i,\ z_2 = 1 + 7i;$ **ա.** $z_1^2 \overline{z_2}$, **բ.** $\frac{z_2}{\overline{z_1^2}}$, **գ.** $\sqrt{z_1 z_2}$, **դ.** $z_2^{100};$

21. Հաշվել **ա.** $\sqrt[4]{16}$, **բ.** $\sqrt[4]{-16}$, **գ.** $\sqrt[4]{16i}$, **դ.** $\sqrt[4]{-16i};$

21.1 Հետևյալ թվերը ներկայացնել ցուցչային տեսքով.

22. Լուծել $\left|z^2-1\right|=1$ հավասարումը, եթե հայտնի է, որ $|z|=1$:

23.Դիցուք $n>1$ և $a_0>a_1>\cdots>a_n>0$ իրական թվեր են: Ապացուցել, որ $P(z)=a_0+a_1z+a_2z^2+\cdots+a_nz^n$ բազմանդամը C-ում չունի ոչ մի զրո, որը բացարձակ արժեքով փոքր կամ հավասար լինի մեկից:

24.Ցույց տալ, որ

ա. $\forall w,z\in C,\left(1+|w|^2\right)z=\left(1+|z|^2\right)w$ հավասարությունից հետևում է, որ $w=z$ կամ $\bar{z}w=1$:

բ. Եթե $a,b,c,d\in C$ և $|a|=|b|=|c|$, ապա հետևյալ կոմպլեքս թիվը իրական է. $(a-b)(c-d)\left(\bar{a}-\bar{d}\right)\left(\bar{c}-\bar{b}\right)+i\left(c\bar{c}-d\bar{d}\right)-\operatorname{Im}\left(c\bar{b}-c\bar{a}-a\bar{b}\right)$:

25. Լուծել $\bar{z}=z^{n-1}$ հավասարումը:

26. Լուծել հետևյալ հավասարումների համակարգը.

ա. $\begin{cases}\operatorname{Re}\left(z^2+z\right)=8\\ |z|^2+\operatorname{Re}z=16\end{cases}$, **բ.** $\begin{cases}z\cdot\bar{z}-\frac{1}{2}\operatorname{Im}z^2=2\\ \operatorname{Re}z^2+\frac{1}{2}\operatorname{Im}z\cdot\operatorname{Re}z=2\end{cases}$,

գ. $\begin{cases}\left|z^2-2i\right|=4\\ \left|\frac{z+1+i}{z-1-i}\right|=1\end{cases}$, **դ.** $\begin{cases}\left|\frac{z-2}{z-4}\right|=1\\ \left|\frac{z-12}{z-8i}\right|=1\end{cases}$,

ե. $\begin{cases} \operatorname{Re}\left(\dfrac{z-1}{z-i}\right)=0 \\ \operatorname{Im}\left(\dfrac{z+i}{z-3i}\right)=4 \end{cases}$, զ. $\begin{cases} z\cdot\overline{z}-\operatorname{Im}z^2-3=2\operatorname{Re}z\cdot\operatorname{Im}z \\ \dfrac{1}{2}\operatorname{Im}z^2=\left|1+i\sqrt{11}\right| \end{cases}$;

27. Գտնել $z=(x+iy)$-ը, եթե

ա. $(1+i)z+(1-i)x+(2+i)y=4+2i,$

բ. $(2-i)z+(3+i)x+(2-i)y=11+2i;$

27.1 Դիցուք z_0-ն և z_1-ը $z+\dfrac{1}{z}=0$ հավասարման արմատներն են: Հաշվել

ա. $z_0^{50}+\dfrac{1}{z_0^{50}}$ բ. $z_1^{50}+\dfrac{1}{z_1^{50}}$ գ. $z_0^{50}+\dfrac{1}{z_1^{50}}$

27.2 Ապացուցել, որ ցանկացած z_1, z_2, z_3 կոմպլեքս թվերի համար ճշմարիտ է հետևյալ հավասարությունը՝
$z_1\operatorname{Im}\left(\overline{z_2}z_3\right)+z_2\operatorname{Im}\left(\overline{z_3}z_1\right)+z_3\operatorname{Im}\left(\overline{z_1}z_2\right)=0$:

2. ԱՆԸՆԴՀԱՏ ԿՈՐԵՐ ԵՎ ԿԵՏԱՅԻՆ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

$z(t)=x(t)+iy(t), t\in[\alpha,\beta]$ իրական փոփոխականի ֆունկցիան, որտեղ $x(t)$ և $y(t)$ ֆունկցիաներն անընդհատ են, կոչվում է անընդհատ կոր կոմպլեքս հարթության վրա: Եթե α և β արժեքների համար $x(\alpha)=x(\beta), y(\alpha)=y(\beta)$ և կորը ինքնահատման կետեր չունի, ապա $z(t)$ կորը կոչվում է պարզ փակ կոր: $z(t)$ կորը կանվանենք ողորկ, եթե գոյություն ունի և անընդհատ է $z'(t)$ -ն. $z'(t)=x'(t)+iy'(t)\neq 0$:

Կամայական $F(x,y)=0$ անբացահայտ հավասարումով տրված կորի կոմպլեքս հավասարումը $z=x+iy$ կոմպլեքս փոփոխականի միջոցով գրվում է հետևյալ կերպ.

$F\left[\frac{1}{2}\left(z+\bar{z}\right),\frac{1}{2}\left(z-\bar{z}\right)\right]:=\Phi\left(z,\bar{z}\right)=0$ և հակառակը:

Օրինակ 1.Կոմպլեքս հարթության վրա պատկերել հետևյալ տիրույթը. $\left|z+\sqrt{2}\right|+\left|z-\sqrt{2}\right|\leq 2\sqrt{3}$:

$z=x+iy$ տեղադրելով տրված անհավասարության մեջ, կստանանք. $\sqrt{\left(x+\sqrt{2}\right)^2+y^2}+\sqrt{\left(x-\sqrt{2}\right)^2+y^2}\leq 2\sqrt{3}$:

Ձախ մասի երկրորդ գումարելին տեղափոխելով աջ մաս և ստացված անհավասարության երկու մասերն էլ բարձրացնելով քառակուսի կունենանք.

$\sqrt{3}\sqrt{\left(x-\sqrt{2}\right)^2+y^2}\le 2-x\sqrt{2}$: Կրկին բարձրացնելով քառակուսի անհավասարության երկու մասերն և խմբավորելով կստանանք. $\dfrac{x^2}{\sqrt{3}^2}+\dfrac{y^2}{1^2}\le 1,$ որն իրենից ներկայացնում է էլիպս (տես գծագիրը):



Պարզել, թե ինչ կորեր են տրվում հետևյալ հավասարում-ներով.

28. ա. $\left|z-z_0\right|=R,$ **բ.** $\left|z\right|=R,$ **գ.** $\left|z\right|=1,$

դ. $\left|z-z_0\right|=R, 0\le \arg z\le \pi$:

29. $\left|z\right|=\operatorname{Re} z+1$: **30.** $\left|z\right|+\operatorname{Im} z=1$:

31. $\operatorname{Re} z \cdot \operatorname{Im} z = 1$: **32.** $\operatorname{Re} z + 2\operatorname{Im} z = 1$:

33. **ա.** $\operatorname{Re}\frac{1}{z} = 1$, **բ.** $\operatorname{Im}\frac{1}{z} = c = const$:

34. **ա.** $\operatorname{Re} z^2 = 1$, **բ.** $\operatorname{Im} z^2 = 1$:

35. $\operatorname{Re}\frac{z-2i}{z+2i} = 0$: **36.** $\arg\frac{i-z}{z+i} = 0$:

37. $|z-3| + |z+3| = 4$: 37.1. $|z-2| + |z+2| = 2\sqrt{2}$

38. (z) կոմպլեքս հարթության մեջ գտնել $|z^2 - \lambda| = \lambda \ (\lambda > 0)$ հավասարումով տրված կորերը:

Գտնել հետևյալ կորերի կոմպլեքս հավասարումներ.

39. $(x-x_0)^2 + (y-y_0)^2 = R^2$: **40.** $x^2 + y^2 = R^2$:

41. $\frac{x^2}{a^2} + \frac{y^2}{b^2} = 1$: **42.** $x^2 - y^2 = a^2$:

43. $ax + by + c = 0$: **44.** $y = x$:

45. Գտնել կոորդինատային առանցքների պատկերները հետևյալ արտապատկերումների ժամանակ. **ա.** $w = \frac{z+1}{z-1}$, **բ.** $w = 1 + \frac{1}{z}$, **գ.** $w = z^2 + z$:

46. Անհավասարությունների միջոցով գրել կոմպլեքս հարթության հետևյալ բաց բազմությունները.

ա. վերին կիսահարթությունը

բ. աջ կիսահարթությունը

գ. առաջին քառորդը

դ. Այն բոլոր z կետերի բազմությունը, որոնց հեռա-վորությունը կոորդինատների սկզբնակետից փոքր է տրված R թվից

ե. $\frac{\pi}{4}$ մեծություն ունեցող այն անկյան ներքին տիրույթը, որի համար $y = x$ ուղիղը հանդիսանում է անկյան կիսորդ:

47. (z) կոմպլեքս հարթության մեջ կառուցել հետևյալ կորերը.

ա. $z = 2 + iy,$

բ. $z = x - 2i,$

գ. $z = \cos t + i \sin t,\ 0 \le t \le 2\pi,$

դ. $z = R\cos t + iR\sin t, 0 \le t \le \pi$:

(z) կոմպլեքս հարթության մեջ պատկերել անհավասարութ-յուններով տրված բազմությունը:

48. $\{z \in C : |z-4| < 4, |z-2| > 2\}$:

49. $\{z \in C : |z-2| \le 3, \operatorname{Re} z > 3/2, \operatorname{Im} z \ge -1/2\}$:

50. $\{z \in C : |z| > 3, -\pi/4 \le \arg z \le \pi/4\}$:

51. $\{z \in C : |z-1| \le 4, 0 \le \arg z \le \pi/2, \operatorname{Im} z > 1/2\}$:

52. $\left\{z \in C : \left|z+\sqrt{2}\right| + \left|z-\sqrt{2}\right| < 2\sqrt{3}\right\}$:

53. $\{z \in C : |z-2| + |z+3| \ge 4, \operatorname{Im} z > 0\}$:

54. $\{z \in C : |z+2| - |z-2| \ge 2\sqrt{2}, \operatorname{Re} z > 0, \operatorname{Im} z > 0\}$:

55. $\{z \in C : |z-1| < 3, |z-1| > 1, \operatorname{Re} z > 0\}$:

56. $\{z \in C : |z+2| - |z-2| \le 2\sqrt{3}, 0 \le \arg z \le \pi/6\}$:

57. $\left\{z \in C : \left|z-\sqrt{3}\right| + \left|z+\sqrt{3}\right| < 4, \left|z+\sqrt{2}\right| - \left|z-\sqrt{2}\right| \le 2\right\}$:

58. $\{z \in C : |z+2i| + |z-2i| \le 6, |z| > 1\}$:

59. $\{z \in C : |z| < 4, |z-i| \ge 1, \operatorname{Im} z \ge 0\}$:

60. $\{z \in C : |z-2| + |z+2| < 6, |z| < 1\}$:

61. $\{z \in C : |z+1| + |z-1| < 4, \operatorname{Im} z > 0\}$:

62. $\{z \in C : \operatorname{Re} z < 2, \operatorname{Im} z > 1/2, |z-1| > 1\}$:

63. Պատկերել $|z + z_0| \cdot |z - z_0| < R^2$ տիրույթը:

64. Դիցուք $T_0 = \{z \in C : |\operatorname{Re} z| \leq 1, 0 \leq \operatorname{Im} z \leq 2\}$, իսկ $T_n = \{z \in C : |\operatorname{Re} z| \leq 8 + n - \operatorname{Im} z, 2n \leq \operatorname{Im} z \leq 8 + n\}$: Պատկերել $T = \bigcup_{n=0}^{\infty} T_n$:

3. ՍՏԵՐԵՈԳՐԱՖԻԿ ՊՐՈՅԵԿՑԻԱ

3.1 Սահմանում. $z = \infty$ սիմվոլն անվանում են անվերջ հեռու կետ:

$z = \infty$ անվերջ հեռու կետի շրջակայք ասելով հասկանում ենք այն բոլոր z կետերի բազմությունը, որոնց համար

$|z| > R, \forall R > 0$:

$C\bigcup\{\infty\} = \overline{C}$, $\overline{C}$ -ին անվանում են ընդլայնված կոմպլեքս հարթություն:



Ռիմանյան սֆերայի միջոցով տրվում է ընդլայնված կոմպլեքս հարթության երկրաչափական մեկնաբանությունը: Դիցուք S սֆերան կոմպլեքս հարթությունը շոշափում է $z = 0$ կետում և կենտրոնը գտնվում է $(0,0,R)$ կետում: P-ն $z = 0$ կետի տրամագծորեն

հակադիր կետն է սֆերայի վրա: (z) կոմպլեքս հարթության յուրաքանչյուր $z = x + iy$ կետին համապատասխանության մեջ է դրվում սֆերայի այն կետը, որն առաջանում է սֆերայի վրա z –ը P–ին միացնելուց: Այդպիսի համապատասխանության ժամանակ $z = \infty$ կետին կհամապատասխանի P կետը: Այդ համապատասխանությունը՝ կոմպլեքս հարթության կետերի և Ռիմանի սֆերայի կետերի միջև, փոխմիարժեք է: **Այն կոչվում է ստերեոգրաֆիկ պրոյեկցիա:**

65.Գրել z կետի ստերեոգրաֆիկ պրոյեկցիաները, եթե Ռիմանի սֆերան հետևյալն է. $o\xi$ առանցքը համընկնում է OX առանցքին, $o\eta$ -ն՝ OY –ների առանցքի հետ, իսկ $o\varsigma$ –ն ուղղահայաց է $\xi o\eta$ –ին, սֆերայի շառավիղը հավասար է ½-ի, իսկ սֆերայի կենտրոնը գտնվում է $(0,0,1/2)$ կետում:

66.Գրել z կետի ստերեոգրաֆիկ պրոյեկցիաները, եթե Ռիմանի սֆերան նախորդ խնդրում նկաչագրվածն է, շառավիղը 1 է և կենտրոնը գտնվում է $(0,0,1)$ կետում:
67.Ընդհանրացնել նախորդ խնդիրները, երբ սֆերայի շառավիղը R է, իսկ կենտրոնը գտնվում է $(0,0,R)$ կետում:
68. Ռիմանի սֆերայի վրա գտնել կոմպլեքս հարթության հետևյալ կետերի պատկերները. 1,-1,i,-I,1+I,1-i
69.Ռիմանի սֆերայի վրա գտնել հետևյալ գծերի և տիրույթների պատկերները.

ա. $\arg(z)=\alpha$ ճառագայթը

բ. $y=kx$ ուղիղը,

գ. $|z|=r$ շրջանագիծը:

70.Ինչպիսին պետք է լինեն z_1 և z_2 կետերը, որպեսզի դրանց նախապատկերները Ռիմանի սֆերայի վրա լինեն տրամագծորեն հակադիր կետեր:

71.Ռիմանի սֆերայի վրա գտնել տրված $z_1=x_1+iy_1$ և $z_2=x_2+iy_2$ կետերի նախապատկերների՝ $M_1(\xi_1,\eta_1,\varsigma_1),M_2(\xi_2,\eta_2,\varsigma_2)$, d հեռավորությունը:

72.Ցույց տալ, որ Ռիմանյան սֆերան՝ S, իր վրա սահմանված $d=\dfrac{|z_1-z_2|}{\sqrt{\left(1+|z_1|^2\right)\left(1+|z_2|^2\right)}},z_1,z_2\neq\infty,$

$d=\dfrac{1}{\sqrt{1+|z_1|^2}},z_2=\infty$ մետրիկայով հանդիսանում է կոմպակտ մետրիկական տարածություն, այսինքն յուրաքանչյուր $\{z_n\}_{n=1}^{\infty}\in S$ հաջորդականության համար գոյություն ունի $\{z_{n_k}\}_{k=1}^{\infty}\subset\{z_n\}_{n=1}^{\infty}$ ենթահաջորդականություն և $z\in S$ այնպիսին որ $d\left(z_{n_k},z\right)\to 0$ երբ $k\to\infty$:

4.ԿՈՄՊԼԵՔՍ ԹՎԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԱՐՔԵՐ

4.1 Սահմանում. Ասում են, որ $\left\{z_n\right\}_{n=1}^{\infty}$ կոմպլեքս թվերի հաջորդականությունը զուգամետ է և ունի վերջավոր $A=a+ib$ սահմանը, եթե $\forall\varepsilon>0$ համար, գոյություն ունի $n_0\in N$, որ բոլոր $n>n_0$ համար տեղի ունի $\left|z_n-A\right|<\varepsilon$ անհավասարությունը և այդ փաստը գրում են՝ $\lim\limits_{n\to\infty} z_n=A$:

Քանի որ $\left\{z_n\right\}_{n=1}^{\infty}=\left\{x_n+iy_n\right\}_{n=1}^{\infty}$ և $\begin{cases}\left|x_n-a\right|\le\left|z_n-A\right|\\ \left|y_n-b\right|\le\left|z_n-A\right|\end{cases}$ ապա

կոմպլեքս թվերից կազմված $\left\{z_n\right\}_{n=1}^{\infty}$ հաջորդականության զուգամիտությունը համարժեք է երկու իրական թվերից կազմված հաջորդականությունների՝ $\left\{x_n\right\}_{n=1}^{\infty},\left\{y_n\right\}_{n=1}^{\infty}$, զուգամիտությանը:

4.2 Սահմանում. Ասում են, որ $\left\{z_n\right\}_{n=1}^{\infty}$ կոմպլեքս թվերից կազմված հաջորդականության սահմանը ∞ է, եթե $\forall E>0$ թվի համար $\left|z_n\right|>E$ անհավասարությունը տեղի ունի, երբ $n>n_0\in N$ և գրում են. $\lim\limits_{n\to\infty} z_n=\infty$:

$\lim\limits_{n\to\infty} z_n=\infty$ համարժեք է նրան, որ $\left\{x_n\right\}_{n=1}^{\infty},\left\{y_n\right\}_{n=1}^{\infty}$ հաջորդականություններից մեկն ու մեկը ձգտի ∞:

Գտնել տրված $\left\{z_n\right\}_{n=1}^{\infty}$ հաջորդականության սահմանը:

73. $z_n = \dfrac{3^n}{3^n - 1} + i \arccos\dfrac{1}{n}$: **74.** $z_n = \dfrac{a^n}{a^n + 1} + i \arcsin\dfrac{1}{n}$: **75.** $z_n = n\sin\dfrac{1}{n} + i\cos\dfrac{1}{n}$:

76. $z_n = \left(1 + \dfrac{1}{2!} + \dfrac{1}{3!} + \cdots + \dfrac{1}{n!}\right) + i\dfrac{n + \sin n}{n+1}$: **77.** $z_n = \left(1 + \dfrac{1}{2} + \dfrac{1}{3} + \cdots + \dfrac{1}{n}\right) + i^n$:

78. $z_n = \left(1 - \dfrac{1}{2} + \dfrac{1}{3} - \dfrac{1}{4} + \cdots + \dfrac{(-1)^n}{n}\right) + i\left(\dfrac{n+1}{n}\right)^n$:

79. $z_n = \dfrac{a_0 + a_1 n + \cdots a_k n^k}{b_0 + b_1 n + \cdots + b_m n^m} + i\dfrac{b_0 + b_1 n + \cdots + b_m n^m}{a_0 + a_1 n + \cdots a_k n^k}$, որտեղ $a_j = \alpha_j + i\beta_j,\ j = 0,1,\cdots,k, b_j = \delta_j + i\gamma_j,\ j = 0,1,\cdots,m$:

80. $z_n = \sum\limits_{k=1}^{n} \dfrac{1}{4k^2 - 1} + i\sqrt{c + \sqrt{c + \cdots + \sqrt{c}}}, c > 0$:

81. $z_n = \sqrt{n}\left(\sqrt{n+1} - \sqrt{n}\right) + i\left(\dfrac{1}{1\cdot 3} + \dfrac{1}{3\cdot 5} + \cdots + \dfrac{1}{(2n-1)(2n+1)}\right)$:

82. $z_n=\frac{1}{1\cdot2\cdot3}+\frac{1}{2\cdot3\cdot5}+\cdots+\frac{1}{n(n+1)(n+2)}+i\prod_{k=2}^{n}\left(1-\frac{1}{k^2}\right)$:

83. $z_n=x^n+iy^n, |x|<1, |y|<1$:

84.Պարզել հետևյալ հաջորդականությունների զուգամիտությունները.

1. $z_n=\sum_{k=1}^{n}\frac{k!}{k^k}+i\sum_{k=1}^{n}\frac{k^4}{3^k}$, 2. $z_n=\sum_{k=1}^{n}\frac{k+4}{k^2-3k+1}+i\sum_{k=1}^{n}\frac{(k+1)^{k-1}}{k^k}$, 3. $z_n=\sum_{k=1}^{n}\frac{2^k\cdot k!}{k^k}+i\sum_{k=1}^{n}\frac{3^k\cdot k!}{k^k}$,

4. $z_n=\sum_{k=1}^{n}\frac{1}{k^2+1}+i\sum_{k=1}^{n}\frac{3k+1}{k^2\sqrt{k}+2}$:

85.Դիցուք $\{z_n\}_{n=1}^{\infty}, \{w_n\}_{n=1}^{\infty}$ կոմպլեքս թվերի հաջորդականությունները զուգամետ են: Ցույց տալ, որ

$$\lim_{n\to\infty} z_n \lim_{n\to\infty} w_n=\lim_{n\to\infty}\frac{z_1w_n+z_2w_{n-1}+\cdots+z_nw_1}{n}:$$

86.Դիցուք M -ը C -ում բոլոր սահմանափակ հաջորդականությունների բազմությունն է: Ապացուցուցել, որ. ա. $d_1\left(\{z_n\}_{n=1}^{\infty}, \{w_n\}_{n=1}^{\infty}\right)=\sup_{n\in N}\{|z_n-w_n|\}$,

բ. $d_2\left(\{z_n\}_{n=1}^{\infty},\{w_n\}_{n=1}^{\infty}\right)=\sum_{n=1}^{\infty}2^{-n}\left|z_n-w_n\right|,$ գ.

$d_3\left(\{z_n\}_{n=1}^{\infty},\{w_n\}_{n=1}^{\infty}\right)=\sum_{n=1}^{\infty}2^{-n}\frac{\left|z_n-w_n\right|}{1+\left|z_n-w_n\right|}$; բանաձևերից ցանկացածով M բազմությունը վերածվում է մետրիկական տարածության*:

*- Դիցուք X-ը ոչ դատարկ բազմություն է:

Սահմանում.- $d:X\times X\to[0;+\infty)$ արտապատկերումը կոչվում է **մետրիկա** X տարածության վրա, եթե այն բավարարում է հետևյալ երեք աքսիոմներին.

1. $d(x,y)\geq 0; d(x,y)=0\Leftrightarrow x=y, \forall x,y\in X$;
2. $d(x,y)=d(y,x), \forall x,y\in X$;
3. $d(x,y)\leq d(x,z)+d(z,y), \forall x,y,z\in X$;

Այդ դեպքում (X,d) զույգին անվանում են **մետրիկական տարածություն:**

Հետազոտել հետևյալ շարքերի զուգամիտությունը.

86.1 $\sum_{n=1}^{\infty} e^{(1+in)^2}$ **86.2** $\sum_{n=1}^{\infty} \sqrt{n}\left(\frac{3-4i}{5+12i}\right)^n$ **86.3** $\sum_{n=1}^{\infty} \frac{(1+i)(2+i)\cdots(n+i)}{n^n}$

86.4 $\sum_{n=1}^{\infty} \frac{(1+i)(1+2i)\cdots(1+ni)}{n^2 n!}$ **86.5** $\sum_{n=1}^{\infty} \frac{n}{(2i)^n}$ **86.6** $\sum_{n=1}^{\infty} \frac{n!}{(in)^n}$

86.7 $\sum_{n=1}^{\infty} \frac{e^{in}}{n}$ **86.8** $\sum_{n=1}^{\infty} \frac{e^{in\theta}}{n^2}$ **86.9** $\sum_{n=1}^{\infty} \frac{\cos in}{2^n}$

5.ԿՈՄՊԼԵՔՍ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՖՈՒՆԿՑԻԱ

5.1. Սահմանում.-Ասում են, որ C կոմպլեքս հարթության մեջ ընկած D բազմության վրա որոշված է $w=f(z)$ կոմպլեքս արժեքներ ընդունող կոմպլեքս փոփոխականի ֆունկցիան, եթե յուրաքանչյուր $z=x+iy$ կետին համապատասխանության մեջ է դրվում մեկ (միարժեք ֆունկցիա) կամ մի քանի (բազմարժեք ֆունկցիա) $w=u+iv$ կոմպլեքս արժեք:

Քանի որ $z=x+iy, w=u+iv$, ապա $w=f(z)$ համապատասխանությունը կոմպլեքս w և կոմպլեքս z փոփոխականների միջև կլինի տրված, եթե տրված են u և v իրական, երկու x,y փոփոխականի ֆունկցիաները.

$$w=f(z)=u(x,y)+iv(x,y), u(x,y)=\operatorname{Re} f(z), v(x,y)=\operatorname{Im} f(z):$$

Կոմպլեքս փոփոխականի տարրական ֆունկցիաներն են.

1. n-րդ աստիճանի բազմանդամը՝

   $$f(z)=a_0+a_1z+\cdots+a_nz^n, a_n\neq 0:$$

2. Ռացիոնալ ֆունկցիան, որն իրենից ներկայացնում է երկու բազմանդամների հարաբերություն.

   $$f(z)=\frac{a_0+a_1z+\cdots+a_nz^n}{b_0+b_1z+\cdots+b_mz^m}, a_n\neq 0, b_m\neq 0:$$

3. Էքսպոնեցիալ ֆունկցիան.

$$f(z)=\exp(z)=e^{z}=e^{x+iy}=e^{x}e^{iy}=e^{x}(\cos y+i\sin y):$$

4. Կոմպլեք փոփոխականի եռանկյունաչափական ֆունկցիաները.

$$f(z)=\sin z=\frac{e^{iz}-e^{-iz}}{2i},\ f(z)=\cos z=\frac{e^{iz}+e^{-iz}}{2},$$

$$f(z)=tgz=\frac{\sin z}{\cos z}=\frac{e^{iz}-e^{-iz}}{i(e^{iz}+e^{-iz})},\ f(z)=ctgz=\frac{\cos z}{\sin z}=\frac{i(e^{iz}+e^{-iz})}{e^{iz}-e^{-iz}}:$$

5. Կոմպեքս փոփոխականի հիպերբոլական

$$f(z)=chz=\frac{e^{z}+e^{-z}}{2},\ f(z)=shz=\frac{e^{z}-e^{-z}}{2},$$

ֆունկցիաները.

$$f(z)=thz=\frac{e^{z}-e^{-z}}{e^{z}+e^{-z}},\ f(z)=cthz=\frac{e^{z}+e^{-z}}{e^{z}-e^{-z}}:$$

6. Կոմպլեքս փոփոխականի լոգարիթմական ֆունկցիան.

$$f(z)=Ln(z)=\ln z+2\pi ki=\ln|z|+i\arg(z)+2\pi ki,k\in Z,$$

$$\ln z=\ln|z|+i\arg(z)$$

կոչվում է $Ln(z)$ -ի գլխավոր արժեք՝ $-\pi<\arg(z)\le\pi:$

$$Arg(z)=\arg(z)+2\pi k,k\in Z:$$

7. Աստիճանային ֆունկցիան.

$$f(z)=z^{\alpha}=e^{\alpha Ln(z)},z\ne 0,\alpha=a+ib:$$

8. Ցուցչային ֆունկցիան. $f(z)=a^{z}=e^{zLn(z)},a=\alpha+i\beta\ne 0:$

9. Կոմպլեքս փոփոխականի հակադարձ եռանկյունաչա-փական ֆունկցիաներ.

$$Arc\cos z = -iLn\left(z+\sqrt{z^2-1}\right), Arc\sin z = -iLni\left(z+\sqrt{z^2-1}\right),$$

$$Arctgz = \frac{i}{2}Ln\left(\frac{i+z}{i-z}\right) = \frac{-i}{2}Ln\left(\frac{1+iz}{1-iz}\right), Argcctgz = \frac{i}{2}Ln\left(\frac{z-i}{z+i}\right):$$

$$\text{arc}\cos z = -i\ln\left(z+\sqrt{z^2-1}\right); \text{arcsin}\, z = -i\ln i\left(z+\sqrt{z^2-1}\right);$$

$$\text{arc}\,tgz = \frac{i}{2}\ln\frac{i+z}{i-z}; \text{arc}\,ctgz = \frac{i}{2}\ln\frac{z-i}{z+i};$$

$$Arcshz = Ln\left(z+\sqrt{z^2+1}\right); Arcchz = Ln\left(z+\sqrt{z^2-1}\right);$$

10.
$$Arcthz = \frac{1}{2}Ln\left(\frac{1+z}{1-z}\right); Arccthz = \frac{1}{2}Ln\left(\frac{z+1}{z-1}\right);$$

$$\text{arcs}\,hz = \ln\left(z+\sqrt{z^2+1}\right); \text{arc}\,chz = \ln\left(z+\sqrt{z^2-1}\right);$$

$$\text{arc}\,thz = \frac{1}{2}\ln\frac{1+z}{1-z}; \text{arc}\,cthz = \frac{1}{2}\ln\frac{z+1}{z-1};$$

Օրինակ 1. Հաշվել $Ln\left(-1-i\sqrt{3}\right)$–ը: Համաձայն կոմպլեքս լոգարիթմի սահմանման.

$$Ln\left(-1-i\sqrt{3}\right) = \ln\left|-1-i\sqrt{3}\right| + i\arg\left(-1-i\sqrt{3}\right) + 2\pi ki = \ln 2 + i\left(-\frac{2\pi}{3}+2\pi k\right):$$

Օրինակ 2.Առանձնացնել $f(z) = ze^z$ ֆունկցիայի իրական և կեղծ մասերը:

$$f(z) = ze^z = (x+iy)e^{x+iy} = (x+iy)e^x(\cos y + i\sin y) =$$

$$e^x(x\cos y - y\sin y) + ie^x(y\cos y + x\sin y):$$

87. Ապացուցել հետևյալ բանաձևերը.

1. $\sin iz = ishz$ 2. $shiz = i\sin z$ 3. $\cos iz = chz$ 4. $chiz = \cos z$

5. $tgiz = ithz$ 6. $ctgiz = -icthz$ 7. $\sin z = ishiz$ 8. $shz = -i\sin iz$

Լուծել հավասարումները.

88. $\sin z = 2$ **89.** $\cos z = i$ **90.** $5\cos z + 12\sin z = 39$

91. $\left|\sin z\right| = 3$ **:92.** $\sin 2z - 2\cos 2z = 3\sin z\cos z - 2$

93. $\left|shz\right| = 3$ **:93.1** $\cos z = chz$:

93.2 $\sin z = ishz$ 93.3 $\cos z = ishz$:

94. Ելնելով եռանկյունաչափական և հիպերբոլական ֆունկցիաների սահմանումներից ապապցուցել հետևյալ բանաձևերը.

1. $\sin^2 z + \cos^2 z = 1,$ **2.** $ch^2 z - sh^2 z = 1,$

3. $sh\left(z_1 \pm z_2\right) = shz_1chz_2 \pm chz_1shz_2,$ **4.**

$ch\left(z_1 \pm z_2\right) = chz_1chz_2 \pm shz_1shz_2,$

5. $sh2z = 2shzchz,$ **6.** $ch2z = ch^2 z - sh^2 z$:

95. Օգտվելով էսպոտենցիալ ֆունկցիայի սահմանումից և Էյլերի բանաձևից՝ $e^{i\varphi} = \cos\varphi + i\sin\varphi$ որտեղ φ –ն իրական թիվ է, ապացուցել հետևյալ հավասարությունները.

1. $e^{z_1+z_2} = e^{z_1}\cdot e^{z_2}$ 2. $e^{z+2\pi i} = e^z$

3. $e^{z+\omega} = e^z, \forall z \in C, \omega = 2\pi ki, k \in Z$:

96.Դիցուք $f:C\to C$ որևէ ֆունկցիա է: Ապացուցել, որ $f(z)$ –ը կլինի անընդհատ C–ում այն և միայն այն դեպքում, երբ $f\left(\overline{A}\right)\subset\overline{f(A)}$:

97.Ապացուցել, որ $f:C\to C$ ֆունկցիան կլինի անընդհատ այն և միայն այն դեպքում, երբ ցանկացած բաց (փակ)բազմության նախապատկերը բաց (փակ)է:

Հաշվել նշված $f(z)$ ֆունկցիայի արժեքը տրված z_0 կետում.

$98.\ f(z)=e^z, z_0=2+\frac{\pi}{3}i:$ $99.\ f(z)=(1+i)^z, z_0=2:$

$100.\ f(z)=Ln(z), z_0=\frac{1+i}{1-i}:$ $101.\ f(z)=\cos z, z_0=\frac{\pi}{4}-2i:$

$102.\ f(z)=\ln(z), z_0=\frac{1-2i}{1+2i}:$ $103.\ f(z)=\sin 2z, z_0=2+\pi i:$

$104.\ f(z)=ch\frac{z}{2}, z_0=2-\pi i:$ $105.\ f(z)=(1+i)^z, z_0=1-i:$

$106.\ f(z)=z^3, z_0=3-4i:$ $107.\ f(z)=z+\frac{1}{z}, z_0=3+3i:$

$108.\ f(z)=z^2+\frac{1}{z^2}, z_0=2-3i:$ $109.\ f(z)=tgz, z_0=\frac{\pi}{4}+i:$

$110.\ f(z)=Arc\sin z, z_0=2i:$ $111.\ f(z)=arc\cos z, z_0=-i:$

$112.\ f(z)=sh2z, z_0=1-\frac{\pi}{3}i:$ $113.\ f(z)=Arctgz, z_0=1+i:$

$114.\ f(z)=i^z, z_0=1+i:$ $115.\ f(z)=Arcshz, z_0=2i;$

$116.\ f(z)=Arcthz, z_0=i;$ **117.** $\mathrm{arc}\,cthz, z=-i$:

117.1 $A\text{rcsin}1/2$ **117.2** $\arccos 1/2$:

117.3. $\arcsin 2$ **117.4** $A\text{rc}\,ch2i$ **:**

Հաշվել հետևյալ գումարները.

118. $1/2+\cos x+\cos 2x+\cdots+\cos nx;$ **119.** $\sin x+\sin 2x+\cdots+\sin nx;$

120. $\cos 2x+\cos 4x+\cdots+\cos 2nx;$ **121.** $\sin x+\sin 3x+\cdots+\sin(2n-1)x;$

122. $\cos x+\cos(x+y)+\cdots+\cos(x+ny);$ **123.** $\sin x+\sin(x+y)+\cdots+\sin(x+ny);$

124. $\sum_{j=0}^{n-1}\cos\left(j\frac{2\pi}{n}\right);$ **125.** Ապացուցել, որ

$$\sum_{k=1}^{n-1}(n-k)\cos\frac{2\pi k}{n}=-\frac{n}{2}$$

Առանձնացնել հետևյալ ֆունկցիաների իրական և կեղծ մասերը.

126. $f(z)=z^3+3z^2+2z-1$: **127.** $f(z)=\frac{1}{z}$:

128. $f(z)=\frac{1}{1+z}$: **129.** $f(z)=\frac{z}{z+1}$:

130. $f(z)=\frac{z-z_0}{z+z_0}$: 131. $f(z)=z-\frac{1}{z}$:

132. $f(z)=\sin 2z$: 133. $f(z)=\cos^2 z$

134. $f(z)=tg3z$: 135. $f(z)=ctg\frac{z}{2}$:

136. $f(z) = sh4z$: 137. $f(z) = thz$:

Գտնել հետևյալ ֆունկցիաների մոդուլները.

138. $f(z) = \cos z$: 139. $f(z) = chz$:

140. $f(z) = z - \frac{1}{z}$: 140.1. $f(z) = \frac{1}{2}\left(z + \frac{1}{z}\right)$:

141. $f(z) = \ln(2z)$ 142. $f(z) = e^{2z}$:

142.1 $f(z) = \arcsin z$ 142.2 $f(z) = \text{arcs}\,hz$:

6. ԱՆԱԼԻՏԻԿ ԵՎ ՀԱՐՄՈՆԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

Դիցուք $w = f(z)$ ֆունկցիան որոշված է z կոմպլեքս հարթության E բազմության վրա և $z, z + \Delta z$ կետերը պատկանում են այդ բազմությանը:

6.1Սահմանում. $w = f(z)$ ֆունկցիան կոչվում է դիֆերենցելի $z \in E$ կետում, եթե գոյություն ունի $\lim\limits_{\Delta z \to 0} \dfrac{f(z+\Delta z) - f(z)}{\Delta z}$ սահմանը և այն վերջավոր թիվ է:

Այդ սահմանը անվանում են ֆունկցիայի ածանցյալ և նշանակում են $f^{'}_{z \in E}(z)$ կամ ուղղակի $f^{'}(z)$:

6.2Սահմանում. Եթե $f(z)$ ֆունկցիան դիֆերենցելի է E բազմության յուրաքանչյուր կետում, այն անվանում են դիֆերենցելի E բազմության վրա:

$f(z) = u(x,y) + iv(x,y),$

$$f^{'}(z) = \frac{\partial u}{\partial x} + i\frac{\partial v}{\partial x} = \frac{\partial u}{\partial x} - i\frac{\partial u}{\partial y} = \frac{\partial v}{\partial y} - i\frac{\partial u}{\partial y} = \frac{\partial v}{\partial y} + i\frac{\partial v}{\partial x}:$$

6.3Թեորեմ. Որպեսզի $f(z) = u(x,y) + iv(x,y)$ ֆունկցիան լինի կոմպլեքս դիֆերենցելի E բազմության z կետում, անհրաժեշտ է և բավարար, որ այդ կետում $u(x,y), v(x,y)$ ֆունկցիաները լինեն դիֆերենցելի որպես երկու

փոփոխականի ֆունկցիաներ և բավարարեն հետևյալ հավասարություններին. $\begin{cases} \dfrac{\partial u}{\partial x} = \dfrac{\partial v}{\partial y} \\ \dfrac{\partial u}{\partial y} = -\dfrac{\partial v}{\partial x} \end{cases} (C-R):$

Վերջին պայմաններին անվանում են Կոշիի-Ռիմանի պայմաններ:

6.4Սահմանում. Եթե $w = f(z)$ ֆունկցիան դիֆերենցելի է E բազմության յուրաքանչյուր կետում, այն անվանում են անալիտիկ կամ հոլոմորֆ ֆունկցիա բազմության E վրա:

6.5 Սահմանում. $\varphi(x, y)$ երկու փոփոխականի ֆունկցիան կոչվում է հարմոնիկ $D \subset C$ տիրույթում, եթե այն այդ տիրույթում ունի մինչև երկրորդ կարգի անընդհատ մասնական ածանցյալները և բավարարում է Լապլասի հավասարմանը. $\Delta\varphi = \dfrac{\partial^2\varphi}{\partial x^2} + \dfrac{\partial^2\varphi}{\partial y^2} = 0:$

(C-R) պայմաններից հետևում են, որ անալիտիկ ֆունկցիայի իրական և կեղծ մասերը հանդիսանում են հարմոնիկ ֆունկցիաներ:

6.6 Սահմանում. Այն երկու $u(x, y)$ և $v(x, y)$ հարմոնիկ ֆունկցիաները, որոնք միմյանց հետ կապված են $(C-R)$ պայմաններով կոչվում են համալուծ հարմոնիկ ֆունկցիաներ:

Այսպիսով, անալիտիկ ֆունկցիայի իրական և կեղծ մասերը հանդիսանում են համալուծ հարմոնիկ ֆունկցիաներ:

6.7Թեորեմ. $f(z)$ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիան կլինի անալիտիկ այն և միայն այն դեպքում, երբ նրա իրական և կեղծ մասերը լինեն համալուծ հարմոնիկ ֆունկցիաներ:

6.8Թեորեմ. $f(z)$ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիան կլինի կոմպլեքս դիֆերենցելի այն և միայն այն դեպքում, երբ

$$\frac{\partial f}{\partial \bar{z}} = 0:$$

Օրինակ 1. $f(z) = z - \frac{1}{z}$ ֆունկցիայի համար առանձնացնել իրական և կեղծ մասերը և ստուգել Կոշիի-Ռիմանի պայմանները:

$$f(z) = z - \frac{1}{z} = x + iy - \frac{1}{x+iy} = x + iy - \frac{x-iy}{x^2+y^2} = x - \frac{x}{x^2+y^2} + i\left(y + \frac{y}{x^2+y^2}\right):$$

$u(x,y) = x - \frac{x}{x^2+y^2}, v(x,y) = y + \frac{y}{x^2+y^2}$: Հաշվելով մասնական ածանցյալները նկատեւմ ենք.

$$\frac{\partial u}{\partial x} = \frac{\partial v}{\partial y} = 1 + \frac{x^2-y^2}{\left(x^2+y^2\right)^2}, \frac{\partial u}{\partial y} = -\frac{\partial v}{\partial x} = \frac{2xy}{\left(x^2+y^2\right)^2}:$$

Օրինակ 2. $\operatorname{Re} f(z) = u(x,y) = x + sh2x\cos 2y + 1$: Գտնել $\operatorname{Im} f(z) = v(x,y)$ –ը և վերականգնել $f(z)$ անալիտիկ ֆունկցիան, եթե $v(1,0) = 1$:

Կոշիի-Ռիմանի հավասարություններից կունենանք.

$$\begin{cases} \dfrac{\partial v}{\partial y} = \dfrac{\partial u}{\partial x} = 1 + 2ch2x\cos 2y \\ \dfrac{\partial v}{\partial x} = -\dfrac{\partial u}{\partial y} = 2sh2x\sin 2y \end{cases} :$$

Համակարգի առաջին հավասարումն ինտեգրելով ըստ y–ի, կստանանք. $v(x,y) = y + ch2x\sin 2y + \varphi(x)$: Ստացված հավասարությունից գտնելով $\dfrac{\partial v}{\partial x}$–ը և համեմատելով համակարգի երկրորդ հավասարման հետ, կունենանք.

$\varphi'(x) = 0 \Rightarrow \varphi(x) = c = const$: Հետևապես

$v(x,y) = y + ch2x\sin 2y + c; v(1,0) = 1 \Rightarrow c = 0$: Այսպիսով

$v(x,y) = y + ch2x\sin 2y$: Քանի որ

$\cos 2y = ch2yi, i\sin 2y = sh2yi$, ապա կստանանք $f(z)$–ի հետևյալ տեսքը.

$$f(z) = u(x,y) + iv(x,y) = x + sh2x\cos 2y + ich2x\sin 2y + iy + 1$$
$$= (x + iy) + (sh2xch2iy + ch2xsh2yi) + 1 = z + sh(2x + 2yi) + 1 = z + sh2z + 1:$$

143. Ապացուցել, որ հարմոնիկ ֆունկցիաների գծային կոմբինացիան նույնպես հարմոնիկ ֆունկցիա է:

144. Ցույց տալ, որ Կոշիի-Ռիմանի պայմանները բևեռային կոորդինատական համակարգում ունի հետևյալ տեսքը.

$$\begin{cases} \dfrac{\partial u}{\partial r} = \dfrac{1}{r}\dfrac{\partial v}{\partial \varphi} \\ \dfrac{\partial v}{\partial r} = -\dfrac{1}{r}\dfrac{\partial u}{\partial \varphi} \end{cases}:$$

145. Բևեռային կոորդինատներով գտնել Լապլասի օպերատորի տեսքը:

Գտնել այն $u(x,y)=u(r,\varphi)$ հարմոնիկ ֆունկցիաները և դրանց համապատասխանաբար անալիտիկ ֆունկցիանները. $f(z)=u(x,y)+iv(x,y)=u(r,\varphi)+iv(r,\varphi)$, եթե տրված $h(t)$ ֆունկցիան երկու անգամ անընդհատ դիֆերենցելի է:

146. $1. u=h(x), 2. u=h(y):$ 147.1. $u=h\left(x^2+y^2\right):$

147.2. $u=h\left(\sqrt{x^2+y^2}\right)$ 148.1. $u=h\left(\dfrac{y}{x}\right):$ 148.2. $u=h\left(\dfrac{x}{y}\right)$

149. $u=h(xy):$

150.1. $u=h\left(\dfrac{x}{x^2+y^2}\right):$ 150.2. $u=h\left(\dfrac{y}{x^2+y^2}\right):$

151.1. $u=h\left(x+\sqrt{x^2+y^2}\right):$ 151.2. $u=h\left(y+\sqrt{x^2+y^2}\right)$

Վերականգնել $w = f(z)$ անալիտիկֆունկցիան, $w = \rho e^{i\theta}$,եթետրվածէնրամոդուլըկամարգումենտը.

152.$\rho = \sqrt{x^2 + y^2}$: 153.$\rho = e^{-xy}$: **154.** $\theta \alpha xy$: **155.** $\boldsymbol{\theta = \varphi + r \sin \varphi}$:

156.Գտնել այն բոլոր f ֆունկցիաները, որոնց համար $f(u(x,y))$ կլինի հարմոնիկ, որթե $u(x,y)$–ն է հարմոնիկ:

157.Պարզել տրված ֆունկցիաների հարմոնիկությունը, եթե $f(z) = u(x,y) + iv(x,y)$ -ը անալիտիկ ֆունկցիա է. 1)$|f(z)|^p, p \geq 1;$ 2)$\ln|f(z)|$, 3)$|u(x,y)|^p, p > 1;$ 4)$\arg f(z)$:

158.Ինչպիսին է անալիտիկ ֆունկցիայի կեղծ մասը, եթե $\operatorname{Re} f(z) = C = const$:

159. $w = f(z)$ անալիտիկ ֆունկցիան կանվանենք միաթերթ D բազմությանվրա, եթե D բազմության երկու տարբեր կետերում այն ընդունում է տարբերարժեքներ: Դիցուք $w = f(z), f: D \to G$ միաթերթէ: Այդ դեպքում G տիրույթի մակերեսը՝ S_G , և $\gamma \subset D$ կորի պատկեր կորի՝ $\Gamma \subset G$, երկարությունը՝ L_Γ , հաշվում են հետևյալ բանաձևերով. $S_G = \iint_D |f'(z)| dxdy$ և $L_\Gamma = \int_\gamma |f'(z)| ds$:

Գտնել անալիտիկ ֆունկցիաները, առանձնացնել դրանց իրական և կեղծ մասերը և ստուգել Կոշիի-Ռիմանի պայմանները:

160. $f(z)=\dfrac{1}{1+z}$: 161. $f(z)=\dfrac{z}{1+\bar{z}}$:

162. $f(z)=\dfrac{z}{z+1}$: 163. $f(z)=|z|(1+z)$:

164. $f(z)=|z|^2+z-1$: 165. $f(z)=ze^z$:

166. $f(z)=ze^{|z|^2}$: 167. $f(z)=z\sin z$:

168. $f(z)=z^2\cos z$: 169. $f(z)=tg2z$:

170. $f(z)=z^2+e^z$: 171. $f(z)=\ln(1-|z|)$:

172. $f(z)=\ln(1-z)$: 173. $f(z)=e^{z+z^2}$:

174. $f(z)=z-\dfrac{1}{z}$: 175. $f(z)=\ln(1+z^2)$:

176. $f(z)=e^z\sin 2z$: 177. $f(z)=\cos(3z+\pi/4)$:

178. $f(z)=sh(z/2)$: 179. $f(z)=ch\left(4|z|^2/\bar{z}\right)$:

180. $f(z)=th(z)$: 180.1 $f(z)=\operatorname{arc}chz$

Ստուգել տրված ֆունկցիաների հարմոնիկությունը նշված տիրույթներում, գտնել համալուծ հարմոնիկը և վերականգնել $f(z)$ անալիտիկ ֆունկցիան տրված իրական՝ $u(x,y)=Ref(z)$,կամ կեղծ՝$v(x,y)=Imf(z)$մասով:

181. $v(x,y)=x^2-y^2-3x, 0\le |z|<\infty, u(1,0)=3$:

182.$u(x,y)=x^3-3xy^2-x, 0\le |z|<\infty, v(0,1)=-1$:

183. $u(x,y)=x^2-y^2+5x+y-\frac{y}{x^2+y^2}, 0<|z|<\infty, v(1,1)=-\frac{1}{2}$:

184. $v(x,y)=x^2-y^2+3-\frac{y}{2(x^2+y^2)}, 0<|z|<\infty, u(2,0)=2{,}5$:

185. $u(x,y)=x+\frac{x}{x^2+y^2}, 0<|z|<\infty, v(0,1)=-3$:

186. $v(x,y)=\ln(x^2+y^2)+x-2y, 0<|z|<\infty, u(1,1)=-\frac{\pi}{2}-3$:

187. $u(x,y)=\frac{1}{2}\ln(x^2+y^2)+x-\frac{x}{x^2+y^2}, 0<|z|<\infty, v(0,1)=0$:

188. $v(x,y)=xarctg\frac{y}{x}+\frac{y}{2}\ln(x^2+y^2)+6xy-2, 0<|z|<\infty, u(1,0)=3$:

189.$v(x,y)=e^x\sin y-xy-y, 0\le |z|<\infty, u(0,0)=0$:

190. $u(x,y)=e^{2x}\cos y+xshx-y\cos xshy, 0\le |z|<\infty, v(0,0)=0$:

191. $u(x,y)=e^x(x\cos y-y\sin y)+2\sin xshy+x^3-3xy^2+y, z\in C, v(0,0)=2$: **192**. $v(x,y)=\frac{x\cos xshy-y\sin xchy}{x^2+y^2}, z\in C\backslash\{0\}, u(\pi,0)=0$:

193.$u(x,y)=\frac{\frac{1}{2}x\ln\left((1+x)^2+y^2\right)+yarctg\frac{y}{1+x}}{x^2+y^2}, z\in C\backslash\{0\}, v(1,0)=0$:

194.$v(x,y)=\frac{xe^x\sin y-ye^x\cos y+y}{x^2+y^2}$,0<$|z|<\infty, u(1,0)=0$:

195. $u(x,y)=xch2x\cos 2y-ysh2x\sin 2y-x^2+y^2+x, z\in C, v(0,0)=0$:

196.Ապացուցել, որ կոմպլեքս հարթության տրված D տիրույթում որոշված այն բոլոր անալիտիկ ֆունկցիաները՝ $f=u+$

iv , որոնք ընդունում են միայն իրական կամ միայն կեղծ արժեքներ, հաստատուն են D–ում:

197.Դիցուք $f(z) = u + iv \in A(G)$ (անալիտիկ ֆունկցիա է տիրույթում): Երբ կլինի անալիտիկ $u^2 + iv^2$ֆունկցիան:

198.Ապացուցել, որեթե $f(z) = u + iv \in A(D)$ և $|f(z)| = 1$,ապա$f(z)$-ըհաստատունէD–ում:

7. ԿՈՆՖՈՐՄ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐ

7.1 Սահմանում. Անընդհատ ֆունկցիաների այն արտապատկերումները, որոնք պահպանում են տվյալ կետով անցնող կորերի կազմած անկյունները, կոչվում են կոնֆորմ արտապատկերումներ:

Եթե պահպանվում է ոչ միայն անկյան մեծությունը, այլ նաև անկյան հաշվարկային ուղղությունը, ապա կոնֆորմ արտապատկերումը կոչվում է առաջին տիպի կոնֆորմ արտապատկերում, հակառակ դեպքում՝ երկրորդ տիպի կոնֆորմ արտապատկերում:

D տիրույթում որոշված $w = f(z)$ անալիտիկ ֆունկցիան $\forall z \in D$ կետում իրականացնում է առաջին տիպի կոնֆորմ արտապատկերում, եթեմիայն $f'(z) \neq 0$:

7.2 **Սահմանում.** $\boldsymbol{z_0}$ կետը կոչվում է $w = f(z)$ ֆունկցիայի անշարժ կետ, եթե $f(z_0) = z_0$:

Այն կոտորակագծային արտապատկերումը՝ $w = f(z)$, որի դեպքում $w_i = f(z_i), i = 1,2,3,$ որոշվում է հետևյալ անբացահայտ հավասարումից. $\frac{w-w_1}{w-w_2} : \frac{w_3-w_1}{w_3-w_2} = \frac{z-z_1}{z-z_2} : \frac{z_3-z_1}{z_3-z_2}$ (1):

Մասնավորապես, եթե z_i , կամ $w_i, i = 1,2,3,$ կետերից որևէ մեկը հավասար է ∞ –ի, օրինակ $z_1 = \infty$,ապա (1) բանաձևը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\frac{w-w_1}{w-w_2}:\frac{w_3-w_1}{w_3-w_2}=\frac{1}{z-z_2}:\frac{1}{z_3-z_2}\,(2):$$

199. Գտնել այն գծային արտապատկերման ընդհանուր տեսքը, որի համար i –ն անշարժ կետ է, իսկ $(1+i)$ –պատկերը $(1-i)$ –ն է:

200. Գտնել այն գծային արտապատկերման ընդհանուր տեսքը, որի համար $(1+i)$ –ին անշարժ կետ է, իսկ 1–ի պատկերը i–ն է:

201.Գտնել այն գծային արտապատկերման ընդհանուր տեսքը, որը ա) վերին կիսահարթությունը արտապատկերում է իր վրա, բ) վերին կիսահարթությունը արտապատկերում է աջ կիսահարթությանը, գ) վերին կիսահարթությունը արտապատկերում է աջ կիսահարթությանը:

202. Գտնել այն արտապատկերումները, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին ա) $-1, i, 1+i$ կետերի պատկերները հանդիսանում են $i, -1, 1-i$ կետերը, բ) ± 1 կետերն անշարժ են, իսկ i կետի պատկերը հանդիսանում է$-i$ կետը, գ)$2, 2i, -2i$ կետերի պատկերները հանդիսանում են$1, -2, \infty$ կետերը:

203. Գտնել այն կոտորակագծային արտապատկերման ընդհանուր տեսքը, որը. ա) վերին կիսահարթությունն արտապատկերում է ինքն իր վրա, բ) վերին կիսահարթությունն արտապատկերում է ներքին կիսահարթության վրա, գ) վերին կիսահարթությունն արտապատկերում է աջ

կիսահարթության վրա, դ) միավոր շրջանը արտապատկերում է վերին կիսահարթության վրա:

204. $w = e^{i\alpha}\frac{z-c}{z-\bar{c}}, c = a + ib,$ ֆունկցիան արտապատկերում է վերին կիսահարթությունը միավոր շրջանի վրա: Գտնել 1)$\arg w(x) = \varphi(x), x \in R$,2)$w'(c)$:

205. $w = e^{i\alpha}\frac{z-a}{1-\bar{a}z}, |a| < 1,$ ֆունկցիայի համար, որը միավոր շրջանը արտապատկերում է ինքն իր վրա, գտնել. 1) $\arg w\left(e^{i\varphi}\right) = \omega(\varphi)$; 2) $w'(0)$; 3) $w'(a)$;

206.Արտապատկերել $|z| < 1$ շրջանը վերին կիսահարթության վրա այնպս, որ $w(0) = 1, \arg w'(0) = \frac{\pi}{2}$:

207. Արտապատկերել $|z| < r$ շրջանը $|w| < R$ շրջանի վրա այնպես, որ $w(a) = b, \arg w'(a) = 0, |a| < r, |b| < R$:

208.Գտնել այն կոտորակագծային արտապատկերման ընդհանուր տեսքը, որըմիավոր շրջանը արտապատկերում է աջ կիսահարթության վրա, միավոր շրջանի տրված z_1, z_2 և կետերը բերելով համապատասխանաբար$0, \infty$ կետերին:

8. ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՇԱՐՔԵՐ: ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԼՈԿԱԼ ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՇԱՐՔԻ

8.1 Սահմանում- Աստիճանային են կոչվում հետևյալ տեսքի շարքերը.

$$\sum_{n=0}^{\infty} a_n(z-z_0)^n = a_0 + a_1(z-z_0) + a_2(z-z_0)^2 + \cdots + a_n(z-z_0)^n + \cdots \ (8.2),$$

որտեղa_n–երը տրված կոմպլեքս թվերն ենև կոչվում են (8.2) աստիճանային շարքի գործակիցներ, z_0-ն ֆիքսած կոմպլեքս թիվն է, իսկ z–ը՝կոմպլեքս փոփոխականը:

$z_0 = 0$ դեպքում (8.2) աստիճանային շարքը ընդունում է հետևյալ տեսքը.

$$\sum_{n=0}^{\infty} a_n z^n = a_0 + a_1 z + a_2 z^2 + \cdots + a_n z^n + \cdots \ (8.3):$$

$z - z_0 = \tau$նշանակումով(8.2) աստիճանային շարքը բերվում է (8.3) տեսքի:

8.4 Թեորեմ(*Աբելի*) Եթե (8.2)$\left(\text{համապատասխանաբար}(8.3)\right)$ աստիճանային շարքը զուգամիտում է մի որևէ $z = \overline{z_0}$ կետում, ապա այն բացարձակ զուգամիտում է այն բոլոր z կետերի բազմության վրա, որոնց համար $|z - z_0| < |z - \overline{z_0}|(|z| < |\overline{z_0}|)$:

Այսպիսով վերը նշված տեսքի աստիճանային շարքի զուգամիտության շառավիղը շրջան է՝ $\{z \in C: |z - z_0| < R\}$ կամ համապատասխանաբար $\{z \in C: |z| < R\}, R \geq 0$: R −ը կոչվում է նշված աստիճանային շարքի զուգամիտության շառավիղ: Այն որոշվում է հետևյալ բանաձևերից որևէ մեկով. $R = \frac{1}{\rho}, \rho = \overline{\lim_{n\to\infty} \sqrt[n]{|a_n|}}, R = \lim_{n\to\infty} \left|\frac{a_n}{a_{n+1}}\right|$:

Եթե $\rho = 0, R = \infty$ և $\rho = \infty, R = 0$:

Յուրաքանչյուր աստիճանային շարքի գումարը՝ $f(z)$, իր զուգամիտության տիրույթում՝ $|z - z_0| < R\Big(համապատասխանաբար (8.3)\Big)$իրենից ներկայացնում է անալիտիկ ֆունկցիա, որի ածանցյալը կարելի է ստանալ (8.2)(8.3)աստիճանային շարքն անդամ առ անդամ ածանցելով: $|z - z_0| = R$շրջանագծի վրա յուրաքանչյուր աստիճանային շարք պահանջում է լրացուցիչ հետազոտում, իսկ զուգամիտության շրջանից դուրս նշված աստիճանային շարքերը տարամիտում են:

8.5 Թեորեմ. Եթե$f(z)$-ըմիարժեք անալիտիկ ֆունկցիա է $D < C$ տիրույթում, ապա յուրաքանչյուր $z_0 \in D$ կետի շրջակայքում այն վերլուծվում է լոկալ աստիճանային շարքի. $f(z) = \sum_{n=0}^{\infty} c_n(z - z_0)^n = c_0 + c_1(z - z_0) + c_2(z - z_0)^2 + \cdots$որտեղ$c_n = \frac{f^{(n)}(z_0)}{n!}, n = 0,1,2,\cdots$:

Հետևյալ տարրական կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաները $z_0 = 0$ կետի շրջակայքում վերլուծվում են Թեյլորի շարքի հետևյալ կերպ.

1.$e^z = 1 + z + \frac{1}{2!}z^2 + \cdots + \frac{1}{n!}z^n \cdots = \sum_{n=0}^{\infty} \frac{z^n}{n!}$, $R = +\infty$,

2. $\sin z = z - \frac{1}{3!}z^3 + \cdots + \frac{(-1)^n z^{2n+1}}{(2n+1)!} + \cdots = \sum_{n=1}^{\infty} \frac{(-1)^n z^{2n+1}}{(2n+1)!}, R = \infty$,

3.$\cos z = 1 - \frac{1}{2!}z^2 + \cdots + \frac{(-1)^n z^{2n}}{(2n)!} + \cdots = \frac{\sum_{n=0}^{\infty}(-1)^n z^{2n}}{(2n)!}, R = \infty$,

4.$\ln(1+z) = z - \frac{1}{2}z^2 + \frac{1}{3}z^3 - \cdots + \frac{(-1)^{n-1} z^n}{n} + \cdots = \sum_{n=1}^{\infty} \frac{(-1)^{n-1} z^n}{n}, -1 < R \leq 1$,

5. $arctgz = z - \frac{z^3}{3} + \frac{z^5}{5} - \cdots = \sum_{n=0}^{\infty} \frac{(-1)^n z^{2n+1}}{(2n+1)}, R = 1$,

6.$(1+z)^\alpha = 1 + \alpha z + \frac{\alpha(\alpha-1)}{2!}z^2 + \frac{\alpha(\alpha-1)(\alpha-2)}{3!}z^3 + \cdots, R = 1$:

Մասնավորաբար վերջին հավասարությունից կստանանք.

7.$\frac{1}{1+z} = 1 - z + z^2 - z^3 + \cdots = \sum_{n=0}^{\infty}(-1)^n z^n$,

8. $\frac{1}{1-z} = 1 + z + z^2 + z^3 + \cdots = \sum_{n=0}^{\infty} z^n$:

209. Ինչպես կփոխվի աստիճանային շարքի զուգամիտության շառավիղը, եթե այն դիֆերենցենք անդամ առ անդամ:

210. $\sum_{n=0}^{\infty} a_n z^n$ և $\sum_{n=0}^{\infty} b_n z^n$ աստիճանային շարքերի զուգամիտության շառավիղներն են R և r: Ինչ կարելի է ասել հետևյալ շարքերի զուգամիտության շառավիղների մասին.

1. $\sum_{n=0}^{\infty}(a_n \pm b_n)z^n$, 2. $\sum_{n=1}^{\infty} a_n b_n z^n$, 3. $\sum_{n=0}^{\infty} \frac{a_n}{b_n} z^n$:

211. Հայտնի է, որ $\sum_{n=0}^{\infty} a_n z^n$ աստիճանային շարքի զուգամիտության շառավիղը R-է, 0<R<∞: Գտնել հետևյալ շարքերի զուգամիտության շառավիղները.

1. $\sum_{n=0}^{\infty}(2^n + 3^n)a_n z^n$, 2. $\sum_{n=0}^{\infty} \frac{a_n}{n^{\alpha}} z^n$, 3. $\sum_{n=0}^{\infty} \frac{a_n}{n!} z^n$, 4. $\sum_{n=0}^{\infty} \cos a_n z^n$:

Որոշել հետևյալ աստիճանային շարքերի զուգամիտության շառավիղները:

212. $\sum_{n=0}^{\infty}(2 + (-1)^n)^n z^n$:**213**. $\sum_{n=0}^{\infty}(3^n + 4^n)^{-1} z^n$:

214.$\sum_{n=0}^{\infty} \cos inz^n$:**215**.$\sum_{n=1}^{\infty} \frac{n!}{n^n} z^n$:

216.$\sum_{n=1}^{\infty} \frac{(2n)!}{(n!)^2} z^n$:**217.**$\sum_{n=1}^{\infty} \left(\frac{n-1}{n}\right)^n z^n$:

218.$\sum_{n=1}^{\infty} \frac{2^n+1}{5^n} z^n$:**219**.$\sum_{n=1}^{\infty}(n + \ln n)(z - i)^{2n}$:

220.$\sum_{n=1}^{\infty} \frac{(2i)^n}{arctgn} (z - 2i)^n$:**221**.$\sum_{n=1}^{\infty} \left[\frac{(2n-1)!!}{(2n)!!}\right] \left(\frac{z-1}{2}\right)^n$:

222.$\sum_{n=1}^{\infty} \frac{\left(1+2\cos\frac{n\pi}{4}\right)^n}{\ln n} (z - i)^n$:**223.**$\sum_{n=1}^{\infty} \left(\frac{2n+1}{3n+1}\right)^{4n+1} (z - 1)^n$:

224.$\sum_{n=1}^{\infty}\frac{\sin(in)}{3^n}z^n$:

Գտնել հետևյալ ֆունկցիոնալ շարքերի զուգամիտության տիրույթները:

225.$\sum_{n=1}^{\infty} ne^{nz}$:226. $\sum_{n=1}^{\infty}\frac{1}{n^2}\left(\frac{z}{2z+1}\right)^n$:

227. $\sum_{n=1}^{\infty}\frac{1}{2n-1}\left(\frac{1-z}{1+z}\right)^n$:**228.**$\sum_{n=1}^{\infty}\left(\frac{z-i}{z+i}\right)^n$:

229. $\sum_{n=1}^{\infty}\left(\frac{z-2}{1-2z}\right)^n$:**230**.$\sum_{n=1}^{\infty}\left(\frac{2}{z}\right)^n + \sum_{n=1}^{\infty}\left(\frac{z}{5}\right)^n$:

231. Ապացուցել հետևյալ հավասարությունները.

1. $\sum_{n=1}^{\infty} r^n \cos n\varphi = \frac{1-\cos\varphi}{1-2r\cos\varphi+r^2}$, 2. $\sum_{n=1}^{\infty} r^n \sin n\varphi = \frac{r\cos\varphi}{1-2r\cos\varphi+r^2}$:

9. ԿՈՄՊԼԵՔՍ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԻՆՏԵԳՐԱԼ: ԿՈՇԻԻ ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ ԹԵՈՐԵՄԸ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ ԲԱՆԱՁԵՎԸ

Դիցուք $f(z) = u(x,y) + iv(x,y)$ կոմպլեքս փոփոխականի միարժեք անալիտիկ ֆունկցիա է $z \in D$ տիրույթում; $\gamma \in D$ ուղղելի ողորկ կոր է, որի վրա ֆիքսված է նրա ուղղություններից մեկը (ըստ արգումենտի աճման կամ նվազման): γ կորով տարածված $f(z)$ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի ինտեգրալը սահմանվում է հետևյալ կերպ․

$$\int_\gamma f(z)dz = \int_\gamma u(x,y)dx - v(x,y)dy + i\left[\int_\gamma v(x,y)dx + u(x,y)dy\right]$$

(որտեղ աջ մասը սեռի II կորագիծ ինտեգրալ է):

Եթե γ *ողորկ*կորը տրված է բացահայտ պարամետրական տեսքով՝

$z(t) = x(t) + iy(t), t_0 \leq t \leq T$, ապա կոմպլեքս փոփոխականի ինտեգրալը կարելի է բերել սովորական ռիմանյան ինտեգրալի՝ $\int_\gamma f(z)dz = \int_{t_0}^{T} f(z(t))z'(t)dt$:

9.1 Սահմանում․$\boldsymbol{F(z)}$անալիտիկ ֆունկցիան անվանում են տրված $f(z)$ ֆունկցիայի նախնական $D \subset C$ տիրույթում, եթե այդ տիրույթի կամայականz կետում

$F'(z) = f(z)$:

Եթե$f(z)$ անընդհատ է Dտիրույթում, ապա դրա ինտեգրալը կախված չէ կորից այլ միայն այդ կորի ծայրակետերից: Հետևաբար այն կարելի է հաշվել Նյուտոն- Լայբնիցի բանաձևով․$\int_{z_1}^{z_2} f(z)dz = F(z_2) - F(z_1)$,

որտեղ $F(z)$ – ը$f(z)$- ի նախնականներից որևէ մեկն է:

9.2. Օրինակ Հաշվել ինտեգրալը․$\int_{-i}^{i} e^{3iz} \cos 3z dz$:

$$\int_{-i}^{i} e^{3iz} \cos 3zd = \int_{-i}^{i} e^{3iz} \frac{e^{3iz} + e^{3iz}}{2} dz$$
$$= \frac{1}{2}\int_{-i}^{i} e^{6iz} dz + \frac{1}{2}\int_{-i}^{i} dz = \frac{i}{6}\frac{e^{6} - e^{-6}}{2} + i$$
$$= \frac{i}{6}(\sinh 6 + 6):$$

9.3. Թեորեմ(Կոշիի ինտեգրալային թեորեմը) Դիցուք $f(z)$ միարժեք անալիտիկ ֆունկցիա է D միակապ տիրույթում: Այդ դեպքում D տիրույթում ընկած ցանկացած փակ, ուղղելի Ժորդանյան γ կորով տարածված $f(z)$ ֆունկցիայի ինտեգրալը հավասար է զրոյի՝ $\oint_{\gamma} f(z) dz = 0$:

9.4. Ընդհանրացում I- Դիցուք$f(z)$ միարժեք անալիտիկ ֆունկցիա է Dմիակապ տիրույթում և անընդհատ է ընդհուպ

մինչև∂D եզրագիծք, որն իրենից ներկայացնում է ողորկ փակ Ժորդանյան կոր: Այդ դեպքում. $\int\limits_{\partial D} f(z)dz = 0$:

9.5 Ընդհանրացում II- Դիցուք D բազմակապ տիրույթի եզրագիծը բաղկացած է ∂D ողորկ, փակ ժորդանյան կորից և իրար հետ զույգ առ զույգ չհատվող $\gamma_1, \gamma_2, \cdots, \gamma_n$ողորկ կորերից: Եթե $f(z)$միարժեք անալիտիկ ֆունկցիա է Dտիրույթում, անընդհատ ընդհուպ մինչև եզրագիծը, ապա $\int\limits_{\gamma} f(z)dz = \sum\limits_{k=1}^{n} \int\limits_{\gamma_k} f(z)dz$, որտեղ ինտեգրումները կատարվում են դրական կամ բացասական ուղղություններով :

9.6 Թեորեմ (Կոշիի ինտեգրալային բանաձևը)-Դիցուք $f(z)$ միարժեք անալիտիկ ֆունկցի է Dմիակապ տիրույթում և L փակ ուղղելի ողորկ կոր է ընկած D ներսը: Այդ դեպքում՝

$$f(z_0) = \frac{1}{2\pi i} \oint\limits_{L} \frac{f(z)}{z - z_0} dz, z_0 \in D :$$

9.7 Ընհանրացում. Եթե $f(z)$ միարժեք անալիտիկ ֆունկցիա է D միակապ տիրույթում, անընդհատ ընդհուպ մինչև կտոր առ կտոր ողորկ Ժորդանյան կոր հանդիսացող ∂D եզրագիծը, ապա ճշմարիտ է հետևյալ բանաձևը՝

$$\frac{1}{2\pi i} \oint\limits_{\partial D} \frac{f(z)dz}{z - z_0} = \begin{cases} f(z_0), z_0 \in D \\ 0, z_0 \notin D \end{cases} :$$

9.8 Հետևանք. Եթե $f(z)$միարժեք անալիտիկ ֆունկցիա է Dմիակապ տիրույթում, ապա այն այնտեղ անվերջ դիֆե-րենցելի է, ընդ որում ցանկացած n ոչ բացասական ամբողջ թվի համար ճշմարիտ է հետևյալ բանաձևը`

$$f^{(n)}(z_0)=\frac{n!}{2\pi i}\int_{\gamma_\rho}\frac{f(z)dz}{(z-z_0)^{n+1}},\ z_0\in D$$

որտեղ

$$\gamma_\rho:=\{z\in D:|z-z_0|=\rho\}\in D:$$

9.9. Թեորեմ. Եթե $f(z)$ միարժեք անալիտիկ ֆունկցիա է D տիրույթում, ապա յուրաքանչյուր $z_0\in D$ կետի շրջակայքում այն վեր է լուծվում լոկալ աստիճանային շարքի$(z-z_0)$ աստիճանների տեսքով. $f(z)=\sum_{n=1}^{\infty}c_n(z-z_0)^n=c_0+c_1(z-z_0)+\cdots+c_n(z-z_0)^n+\cdots$որտեղ

$$c_n=\frac{f^{(n)}(z_0)}{n!}=\frac{1}{2\pi i}\int_{\gamma_\rho}\frac{f(z)dz}{(z-z_0)^{n+1}},n=0,1,2,\cdots:$$ և$\gamma_\rho-$ ով

սահմանափակված տիրույթը ամբողջությամբ ընկած է$D-$ի ներսը:

Հետևյալ տարրական կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաները վեր են լուծվում լոկալ աստիճանային շարքի (Թեյլորի շարքի) $z_0=0$ կետի շրջակայքում.

1. $\boldsymbol{e^z}=\sum_{n=0}^{\infty}\frac{z^n}{n!}=1+z+\frac{1}{2!}z^2+\cdots+\frac{1}{n!}z^n+\cdots,R=\infty;$
2. $\boldsymbol{\sin z}=\sum_{n=0}^{\infty}\frac{(-1)^n z^{2n+1}}{(2n+1)!}=z-\frac{1}{3!}z^3+\cdots+\frac{(-1)^n z^{2n+1}}{(2n+1)!}+\cdots,\boldsymbol{R}=\infty;$

3. $\boldsymbol{\cos z = \sum_{n=0}^{\infty} \frac{(-1)^n z^{2n}}{(2n)!} = 1 - \frac{1}{2!} z^2 + \cdots + \frac{(-1)^n z^{2n}}{(2n)!} + \cdots}$, $R = \infty$;
4. $\boldsymbol{\ln(1+z) = \sum_{n=0}^{\infty} \frac{(-1)^n z^{n+1}}{n+1} = z - \frac{1}{2} z^2 + \cdots + \frac{(-1)^n z^{n+1}}{n+1} + \cdots, R = 1}$:
5. $\boldsymbol{(1+z)^{\alpha} = 1 + \alpha z + \frac{\alpha(\alpha-1)}{2!} z^2 + \frac{\alpha(\alpha-1)(\alpha-2)}{3!} z^3 + \cdots, R = 1}$:

Մասնավորաբար$\alpha = -1$ դեպքում կստանանք երկրաչափական պրոգրեսիայի գումարի բանաձևերը.

5.1 $\boldsymbol{\frac{1}{1+z} = 1 - z + z^2 - z^3 + \cdots + (-1)^n z^n + \cdots, R = 1}$;

5.2 $\boldsymbol{\frac{1}{1-z} = 1 + z + z^2 + z^3 + \cdots + z^n + \cdots, R = 1}$:

9.10 Օրինակ. Հաշվել $\int_{\gamma} \frac{\cosh z dz}{(z^2+\pi^2)^2}$ ինտեգրալը, որտեղ $\gamma := \{z \in C: |z - \pi i| = \pi\}$:

Քանի որ ենթաինտեգրալ ֆունկցիայի եզակի կետերից միայն $z = \pi i$ կետն է գտնվում տվյալ կորով սահմանափակված տիրույթի ներսը, ապա համաձայն Կոշիի ինտեգրալային բանձևի կունենանք. $\int_{\gamma} \frac{\cosh z dz}{(z^2+\pi^2)^2} =$

$$\int_{\gamma} \frac{\cosh z/(z+\pi i)^2 dz}{(z-\pi i)^2} = 2\pi i \left(\frac{\cosh z}{(z+\pi i)^2}\right)'_{z=\pi i} = 2\pi i \left(-\frac{2}{8\pi^3 i}\right) = -\frac{1}{2\pi^2}:$$

9.11 Օրինակ. $\boldsymbol{f(z) = \frac{2z+1}{z^2+z-2}}$ ֆունկցիան վերլուծել աստիճանային շարքի z-ի աստիճանների տեսքով:

Օգտվելով 5.1 և 5.2 վերլուծություններից կունենանք.

$$f(z)=\frac{\mathbf{2z+1}}{\mathbf{z^2+z-2}}=\frac{\mathbf{1}}{\mathbf{z+2}}+\frac{\mathbf{1}}{\mathbf{z-1}}=\frac{\mathbf{1}}{\mathbf{2}}\frac{\mathbf{1}}{\mathbf{1+z/2}}-\frac{\mathbf{1}}{\mathbf{1-z}}$$

$$=\sum_{n=0}^{\infty}\frac{(-1)^n z^n}{2^{n+1}}-\sum_{n=0}^{\infty}z^n=\sum_{n=0}^{\infty}\left(\frac{(-1)^n}{2^{n+1}}-1\right)z^n:$$

Շարքը բացարձակ զուգամիտում է, երբ $|z|<1$:

Հաշվել հետևյալ ինտեգրալները.

232. $\int_i^1 ze^z dz$;**233.**$\int_{-1}^{1+i}(z^3+2z^2+3z)dz$:

234. $\int_0^i z\cos z dz$: **235.** $\int_2^{2i}\sin z\cos 2z dz$;

236. $\int_0^i \sinh z\cos 2z$;**237.** $\int_{-1}^{0} e^{-2iz}\sin 4z dz$;

238. $\int_1^{3i} e^{2z}\cosh 8z$; **238.1** $\int_{-i}^{i} e^{2z} sh2z dz$:

239. $\int_{-\pi i}^{\pi i}\frac{1}{z^2}e^{\frac{2i}{z}}\cos\frac{2}{z}dz$,եթե նշված կետերը միացնող կորը չի անցնում կոմպլեքս հարթության զրոյական կետով:

240. $\int zIm(z^2)dz$,որտեղ $\gamma=\{z\in C: |z|=1, -\pi\le\arg(z)\le\pi\}$.

241. $\int e^{z\bar{\bar{z}}}Re(z)dz$,որտեղ
$\gamma=\{z\in C:$ *ուղիղզծովմիացնումէ* $z=0$ *և* $z=1+i$ *կետերը*$\}$:

242. $\int \boldsymbol{zIm(z^3)dz}$,որտեղ $\gamma = \{z \in C: |z| = 1\}$:

243. $\int |\boldsymbol{z-1}|\boldsymbol{dz}$,որտեղ $\gamma = \{z \in C: |z| = 1\}$:

244. $\int \boldsymbol{z \sin z\, dz}$,որտեղ $\boldsymbol{\gamma} = \{$z ∈ C: ուղիղգծովմիացնումէ z = 0 և z = i կետերը$\}$:

245. $\int \frac{\boldsymbol{dz}}{\boldsymbol{z-1}}$, որտեղ $\gamma = \{z \in C: |z-1| = 2\}$:

246. Դիցուք $\gamma(t) = a\cos t + ib\sin t\,, 0 \le t \le 2\pi, a, b \in R$: Հաշվել $\int |\gamma(t)|^2 d\gamma(t)$:

247.Դիցուք $P(z) = a_0 + a_1 z + a_2 z^2 + \cdots + a_n z^n$ կոմպլեքս փոփոխականի բազմանդամ է և $c \in C, r \in R, > 0$: Ցույց տալ, որ $\int\limits_{|z-c|=r} \overline{P(z)} dz = 2\pi i P'(c)$:

248. Դիցուք $\gamma(t) = e^{it}, 0 \le t \le 2\pi$ և $g: \gamma \to C$անընդհատ ֆունկցիա է: Ցույց տալ, որ $\overline{\int\limits_{\gamma} g(z)\,dz} = -\int\limits_{\gamma} g(z) z^{-2} dz$:

Օգտվելով 248 առաջադրանքից և Կոշիի ինտեգրալային բանաձևից հաշվել հետևյալ ինտեգրալները (նայել նաև 267 և 268 առաջադրանքները):

248.1 $\overline{\int\limits_{|z|=1} e^z dz}$: **248.2** $\overline{\int\limits_{|z|=1} ze^z dz}$:

248.3 $\overline{\int\limits_{|z|=1} \cos z dz}$

248.4 $\overline{\int\limits_{|z|=1} z\cos z dz}$:

248.5 $\overline{\int\limits_{|z|=1} \frac{e^z}{z} dz}$:

248.6 $\overline{\int\limits_{|z|=1} \frac{\sin z}{z} dz}$:

248.7* $\int\limits_{|z|=1} e^{\bar{z}} dz$:

248.8* $\int\limits_{|z|=1} z e^{\bar{z}} dz$:

248.9* $\int\limits_{|z|=1} \frac{\cos \bar{z}}{z} dz$:

249. Ապացուցել, որ, $\int_0^\infty e^{-(1+ia)^2t^2}dt = \frac{1}{2}\frac{1-ia}{1+a^2}\sqrt{\pi}$ որտեղ, $a \in R, |a| \leq 1$:

250. Օգտվելով նախորդ առաջադրանքից հաշվել Ֆրենելի ինտեգրալները. $\int_0^\infty \cos x^2 dx$; $\int_0^\infty \sin x^2 dx$:

251. Օգտվելով նախորդ առաջադրանքից հաշվել. $\int_0^\infty e^{-(at)^2}\cos(2abt)dt, a, b > 0$ ինտեգրալը:

252. Հաշվել Դիրիխլեի ինտեգրալը. $\int_0^\infty \frac{\sin x dx}{x}$:

253. Դիցուք $p, q \in R, p \geq 0, f = \sqrt{p^2+q^2}$: Ցույց տալ, որ

$$\int_0^{\infty} e^{-pt}\frac{\sin qt}{\sqrt{t}}dt = \frac{\sqrt{\pi}}{f}\sqrt{\frac{f-p}{2}}\ ; \qquad \int_0^{\infty} e^{-pt}\frac{\cos qt}{\sqrt{t}}dt = \frac{\sqrt{\pi}}{f}\sqrt{\frac{f+p}{2}}\ ;$$

254. Ապացուցել, որ $\int_0^{\infty}\frac{\sin(ax^2)dx}{x} = \frac{\pi}{4}$;

Ցուցում. Ինտեգրել $f(z) = \frac{e^{iaz^2}}{z}$ անալիտիկ ֆունկցիան նկարում պատկերված միակապ տիրույթի եզրագծով :

255. Ապացուցել հավասարությունները․

$$\int_0^{\infty} x^{p-1}\cos x dx = \Gamma(p)\cos\frac{\pi p}{2}; \int_0^{\infty} x^{p-1} cos\, x dx = \Gamma(p)\sin\frac{\pi p}{2};$$

256.* Օգտվելով Կոշիի ինտեգրալային բանաձևից ապացուցել հետևյալ հավասարությունները․

Ա. $\int_0^{\infty}\cos x^2 dx = \int_0^{\infty}\sin x^2 dx = \frac{\sqrt{2\pi}}{4}$

Բ. $\int_0^{\infty}\frac{\sin x}{x}dx = \frac{\pi}{2}$

Օգտվելով Կոշիի ինտեգրալային բանաձևից հաշվել տրված ինտեգրալները տրված կոնտուրով

257. $\int\limits_{\gamma} \frac{\cos z dz}{z^2+4z+3}, \gamma = \{z \in C : |z| = 2\}$:

258. $\int\limits_{\gamma} \frac{shz dz}{z^2-4z+3}, \gamma = \{z \in C : |z| = 4\}$:

259. $\int\limits_{\gamma} \frac{\sin\frac{\pi z}{2} dz}{z^2+2z-3}, \gamma = \{z \in C : |z-1| = 2\}$:

260. $\int\limits_{\gamma} \frac{e^z dz}{z^2+2z}, \gamma = \{z \in C : |z-\pi| = 2\pi\}$:

261. $\int\limits_{\gamma} \frac{dz}{\left(z^2+1\right)^2}, \gamma = \{z \in C : |z+i| = 1\}$:

262. $\int\limits_{\gamma} \frac{\sin \pi z dz}{\left(z^2-1\right)^2}, \gamma = \{z \in C : |z-i| = 1\}$:

263. $\int\limits_{\gamma} \frac{\cos z dz}{\left(z^2+\pi\right)^2}, \gamma = \{z \in C : |z-i\pi| = \pi\}$:

264. $\int\limits_{\gamma} \frac{dz}{\left(z^2-\frac{\pi^2}{2}\right)^2}, \gamma = \left\{z \in C : \left|z-\frac{\pi}{2}\right| = 1\right\}$:

265. $\int\limits_{\gamma} \frac{\left(z^2+1\right)dz}{z^3+1}, \gamma=\left\{z\in C:|z|=1/2\right\}:$

266. $\int\limits_{\gamma} \frac{e^z dz}{\left(z^2+2z\right)^2}, \gamma=\left\{z\in C:|z|=3\right\}:$

267.
$\int\limits_{\gamma} \sin\bar{z}dz, \gamma=\left\{z\in C:|z|=1\right\}$ ▯ :

268. $\int\limits_{\gamma} z\sin\bar{z}dz, \gamma=\left\{z\in C:|z|=2\right\}:$

269. $\int\limits_{\gamma} \frac{z^3 dz}{(z+2)(z-1)^3}, \gamma=\left\{z\in C:|z-i|=4\right\}:$

270. $\int\limits_{\gamma} \frac{e^{-z} dz}{z(z-1)^3}, \gamma=\left\{z\in C:|z-1|=1\right\}:$

271. $\int\limits_{\gamma} \frac{\ln(1+z)dz}{\left(z^2-1\right)^2}, \gamma=\left\{z\in C:|z-1|=1\right\}:$

272. $\int\limits_{\gamma} \frac{dz}{(z-a)^n(z-b)}, \gamma=\left\{z\in C:|z|=r;|a|<r<|b|\right\}:$

273. $\int\limits_{\gamma} \frac{dz}{(z-a)^n(z-b)}, \gamma=\left\{z\in C:|z|=r;|a|<|b|<r\right\}:$

274. $\int\limits_{\gamma}\frac{dz}{(z-a)^n(z-b)^m}, \gamma=\{z\in C:|z|=r;|a|<|b|<r\}$:

Տրված ֆունկցիաները վերլուծել Թեյլորի շարքի տրված կետի շրջակայքում:

275. $f(z)=\left(z-\frac{\pi}{4}\right)\sin z, z_0=\frac{\pi}{4}$:**276.** $f(z)=(z-\pi/8)(\cos z)^2, z_0=\pi/8$:

277. $f(z)=\sin(2z+1), z_0=-1$:**278.** $f(z)=(\sin z)^4+(\cos z)^4, z_0=0$:

279. $f(z)=\int_0^z e^{z^2}dz, z_0=0$:**280.** $f(z)=\frac{\sin z}{z}, z_0=0$:

281. $f(z)=\ln(z^2-3z+2), z_0=0$: **282.** $f(z)=e^{\sin z}, z_0=0$:

283. $f(z)=\frac{2z+1}{z^2-5z+4}, z_0=0$: **284.** $f(z)=\frac{z}{z^2-z-6}, z_0=0$:

285. $f(z)=\frac{z+1}{z^2+z-2}, z_0=0$:**286.** $f(z)=\frac{1}{z^2-5z+6}, z_0=1$:

287. $f(z)=\frac{1}{z(z^2-9)}, z_0=0$: **288.** $f(z)=\frac{1}{(1-z)^2}, z_0=0$:

289. $f(z)=\frac{1}{(1-z^2)^3}, z_0=0$:**290.** $f(z)=\frac{1}{z(z-3)^2}, z_0=0$:

Գտնել $z_0=0$ կետի շրջակայքում հետևյալ ֆունկցիաների վերլուծության առաջին 4 անդամները:

291. $f(z)=e^{z\sin z}$:**292.** $f(z)=e^{z^2}\sin z$:

293.$\boldsymbol{f(z) = (\ln(1-z))^2}$**:294.**$\boldsymbol{f(z) = e^{z\ln(1+z)}}$:

295.$\boldsymbol{f(z) = \frac{\rho e^{i\alpha}+(z-z_0)}{\rho e^{i\alpha}-(z-z_0)}}$ ֆունկցիան, Շվարցի կորիզ,վերլուծել Թեյլորի շարքի

$(z - z_0)$ –իաստիճանների տեսքով, առանձնացնելով նրա իրական և կեղծ մասերը:

296.Հարմոնիկ ֆունկցիան վերլուծել եռանկյունաչափական շարքի և գործակիցները հաշվելու համար ստանալ համապատասխանբանաձևեր:

297.Օգտվելով Շվարցի կորիզից $|z - z_0| < \rho$ շրջանում ստանալ ինտեգրալ ներկայացումներ հոլոմորֆ և հարմոնիկ ֆունկցիաների համար:

298.Գտնել այն բոլոր անալիտիկ ֆունկցիաները, որոնց համար $f''(z) + f(z) = 0$:

299.Դիցուք $f(z)$ անալիտիկ ֆունկցիա է զրո կենտրոնով r և շառավղով շրջանում, ընդ որում $r > 1$:Հաշվել

$\int_\gamma \left(2 \pm \left(w + w^{-1}\right)\right)\frac{f(w)}{w}dw$ ինտեգրալը, որտեղ՝

$\gamma = \{z \in C : |z| = r\}$ և ցույց տալ հետևյալ

հավասարությունները.

I-$\frac{1}{\pi}\int_0^{2\pi} f(e^{it})\left(\cos\frac{1}{2}t\right)^2 dt = f(0) + \frac{1}{2}f'(0)$,

II- $\frac{1}{\pi}\int_0^{2\pi} f(e^{it})\left(\sin\frac{1}{2}t\right)^2 dt = f(0) - \frac{1}{2}f'(0)$ ։

300. Դիցուք $g(w,z) \in C(\gamma x\overline{D}), \gamma \in C, \frac{\partial g}{\partial z} \in C(\gamma x\overline{D})$ ։

Ապացուցել, որ $h(z) = \int\limits_{\gamma} g(w,z)dw$ ֆունկցիան հոլոմորֆ է

D –ում և $h'(z) = \int\limits_{\gamma} \frac{\partial}{\partial z} g(w,z)dw$ ։

10. ԱՆԱԼԻՏԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԶՐՈՆԵՐԸ ԱՆԱԼԻՏԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԼՈՐԱՆԻ ՇԱՐՔԻ

10.1. Սահմանում. $\boldsymbol{f(z)}$ֆունկցիայի որոշման տիրույթի z_0կետը կոչվում է $f(z)$ֆունկցիայի զրո, եթե $f(z_0)=0$:

10.2 Սահմանում. $\boldsymbol{f(z)}$ անալիտիկ ֆունկցիայիz_0 զրոն անվանում են k պատիկ զրո, կամ $k-րդ$կարգի զրո, եթե $f(z_0)=f'(z_0)=\cdots=f^{(k-1)}(z_0)=0$ իսկ $f^{(k)}(z_0)\neq 0$:

10.3 Թեորեմ Որպեսզի $z_0\neq\infty$կետը լինի kպատիկ զրո $f(z)$անալիտիկ ֆունկցիայի համար անհրաժեշտ է և բավարար որպեսզի այն ներկայացվի հետևյալ տեսքով.
$f(z)=(z-z_0)^k\varphi(z)$, որտեղ $\varphi(z_0)\neq 0$:

10.4 Սահմանում. $\boldsymbol{\sum_{n=-\infty}^{+\infty} c_n(z-z_0)^n=\cdots+\frac{c_{-2}}{(z-z_0)^2}+\frac{c_{-1}}{z-z_0}+c_0+c_1(z-z_0)+c_2(z-z_0)^2+\cdots}$տեսքի շարքերին անվանում են Լորանի շարք:

$\boldsymbol{\sum_{n=-\infty}^{-1} c_n(z-z_0)^n}$կոչվում է Լորանի շարքի գլխավոր մաս, իսկ $\boldsymbol{\sum_{n=0}^{\infty} c_n(z-z_0)^n}$կոչվում է Լորանի շարքի կանոնական մաս:

Լորանի շարքը զուգամետ է$r<|z-z_0|<R$ օղակում, որտեղ $r-$ը և R- ը կարելի է հաշվել հետևյալ բանաձևերով.

$r = \overline{\lim_{n\to\infty} \sqrt[n]{|c_{-n}|}} = \overline{\lim_{n\to\infty}\left|\frac{c_{-n+1}}{c_{-n}}\right|}$; $R = \frac{1}{\overline{\lim_{n\to\infty}\sqrt[n]{|c_n|}}} = \overline{\lim_{n\to\infty}\left|\frac{c_n}{c_{n+1}}\right|}$:

10.5 Թեորեմ. $r < |z - z_0| < R$ օղակում որոշված միարժեք անալիտիկ $f(z)$ ֆունկցիան կարելի է միարժեք ձևով վերլուծել Լորանի շարքի $(z - z_0)-$ի աստիճանների տեսքով. $f(z) = \sum_{n=-\infty}^{+\infty} c_n (z - z_0)^n$, որտեղ

$c_n = \frac{1}{2\pi i}\int_\gamma \frac{f(z)dz}{(z - z_0)^{n+1}}, n = 0, \pm 1, \pm 2\cdots,$ իսկ $\gamma-$ն փակ ժորդանյան կոր է, որն ամբողջությամբ ընկած է նշված օղակում:

10.6 Օրինակ. Որոշել $f(z) = \frac{z^8}{1-\cos z}$ ֆունկցիայի զրոները:

Լուծում. Քանի որ $f(z) = \frac{z^8}{1-\cos z} = \frac{z^8}{\frac{z^2}{2}-\frac{z^4}{4!}+\cdots} = z^6\frac{1}{\frac{1}{2}-\frac{z^2}{4}+\cdots} = z^6\varphi(z)$,որտեղ $\varphi(0) \neq 0$, ապա

$z = 0$ վեցերորդ կարգի զրո է տրված ֆունկցիայի համար:

10.7.Օրինակ. $z \in C$կոմպլեքս հարթության մեջ $f(z) = \frac{5z-12}{z^2-5z+6}$ ֆունկցիան վերլուծել Լորանի շարքի $z-$ի աստիճանների տեսքով:

Լուծում. Քանի որ $f(z) = \frac{3}{z-3} + \frac{2}{z-2}$, ապա ամբողջ կոմպլեքս հարթությունը հետևյալ գծերով բաժանենք որեք տիրույթների. 1). $|z| < 2$; 2).$2 < |z| < 3$; 3). $|z| > 3$:

$$1).\, |z| < 2, \Rightarrow f(z) = -\frac{1}{1-\frac{z}{3}} - \frac{1}{1-\frac{z}{2}} = -\sum_{n=0}^{+\infty}\left(\frac{1}{3^n}+\frac{1}{2^n}\right)z^n:$$

$$2).\, 2 < |z| < 3, \Rightarrow f(z) = -\frac{1}{1-\frac{z}{3}} + \frac{1}{z}\frac{1}{1-\frac{2}{z}} = \sum_{n=0}^{\infty}\frac{2^n}{z^{n+1}} - \sum_{n=0}^{\infty}\frac{z^n}{3^n}:$$

$$3).\, |z| > 3, \Rightarrow f(z) = \frac{3}{z}\frac{1}{1-3/z} + \frac{2}{z}\frac{1}{1-2/z}$$
$$= \sum_{n=0}^{\infty}(3^{n+1}+2^{n+1})z^{-n-1}:$$

301. Դիցուք $f(z)$ամբողջ ֆունկցիա է և$c_1, c_2, \cdots, c_n$նրա զրոներն են համապատասխան $\alpha_1, \alpha_2, \cdots, \alpha_n$պատիկությամբ: Ապացուցել, որ $\frac{f'(z)}{f(z)} = \sum_{j=1}^{n}\frac{1}{z-c_j}$այն և միայն այն ժամանակ երբ $f(z)$ –ը բազմանդամ է:

302. Դիցուք $f(z)$ –ը և $g(z)$-ը հոլոմորֆ ֆունկցիաներ են $G \subset C$տիրույթում, որոնց համար $z = c \in G$ զրո է: Ցույց տալ, որ

Ա.$f(z)g(z)$-ի զրոյի կարգը $c \in G$-ում հավասար է $f(z)$-ի և $g(z)$-ի զրոների կարգերի գումարին$c \in G. O_c(fg) = O_c(f) + O_c(g)$:

Բ.$O_c(f+g) \geq \min\ (O_c(f), O_c(g))$,ընդ որում հավասարությունը տեղի ունի այն և միայն այն ժամանակ, երբ $O_c(f) \neq O_c(g)$:

$z = 0 -$ *ն* որ կարգի զրո է տրված ֆունկցիաների համր:

303. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \int_0^z \sin zdz$:**304.** $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \int_0^z z\ln(1+z^2)dz$:

305. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = tg(z) - \sin(z)$: **306.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = e^{tgz} - e^{\sin z}$:

307. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = (\cosh z)^2 - 1$:**308.** $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \int_0^z \frac{dz}{z+1}$:

Որոշել հետևյալ ֆունկցիաների զրոներն ու դրանց կարգերը

309. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = 1 - \cos z$:**310.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = (1+z)^{\alpha} - 1 - \alpha z$:

311. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = 3\ln(1+z) - 3z + \frac{3}{2}z^2$:**312.** $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = e^{\sin z^4} - 1$:

313. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = 2\cos z + z^2 - 2$:**314.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = z^2\left(e^{z^2} - 1\right)$:

315. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \frac{z^6}{z - \sinh z}$:**316.** $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \frac{z^7}{1 - \cosh z}$:

317. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \frac{z^8}{z - \sin z}$:**318.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = 3arctgz - 3z + z^3$:

319. $\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = z^5 - 5z^4 - 6z^3$: **319.1**
$f(z) = z^6 - 4z^5 + 5z^4 - 4z^3$:

Տրված ֆունկցիաները վերլուծել Լորանի շարքի z_0 կետի շրջակայքում:

320.$f(z) = z^2\cos\frac{1}{z}, z_0 = 0$;**321.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = z^2e^{1/z}, z_0 = 0$:

322.$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \frac{\sin z}{z - \pi/4}, z_0 = \frac{\pi}{4}$:**323.**$\boldsymbol{f}(\boldsymbol{z}) = \frac{1}{z}\sin^2\frac{1}{z}, z_0 = 0$:

324. $f(z)=(z-1)^2\sin\frac{z+1}{z}, z_0=0$: 325. $f(z)=z^2e^{\frac{1}{1-z}}, z_0=1$:

326. $f(z)=\frac{1}{z+1}\cos^2\frac{1}{z+1}, z_0=-1$: 327. $f(z)=\frac{2z+1}{z^2+z-2}, z_0=0$:

328. $f(z)=\frac{z}{z^2-5z-6}, z_0=0$: 329. $f(z)=\frac{1}{z^2-5z+6}, z_0=0$:

330. $f(z)=\frac{1}{z(z-3)}, z_0=1$: 331. $f(z)=\frac{z}{z^2-3z+2}, z_0=-1$:

332. $f(z)=\frac{1}{z(z-2)^2}, z_0=0$: 333. $f(z)=\frac{z^3}{(z-2)(z+1)}, z_0=0$:

333.1 $f(z)=sh\frac{1}{z}, z_0=0$: 333.2 $f(z)=ch(z-1), z_0=0$:

Հետևյալ ֆունկցիաները վերլուծել Լորանի շարքի $z=\infty$ կետի շրջակայքում:

334. $f(z)=z^2e^{1/z}$: 335. $f(z)=z\sin\frac{1}{z^2}$:

336. $f(z)=\frac{\cos z}{z^3}$: 337. $f(z)=\frac{1}{z(z-1)}$:

338. $f(z)=\frac{1}{z(1+z^2)^2}$: 339. $f(z)=e^{\frac{1}{1-z}}$:

340. $f(z)=\ln\frac{z-a}{z-b}$: 340.1 $f(z)=ch2z$:

341. Դիցուք $n\in N$ բնական թվի համար գոյություն ունեն $M,R>0$ թվեր, այնպիսիք, որ $|f(z)|\le M|z|^n$ երբ $|z|>R$: Ապացուցել, որ $f(z)$ բազմանդամ է որի կարգը չի գերազանցում n- ը:

11․ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԵԶԱԿԻ ԿԵՏԵՐ․ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ․ ՄՆԱՑՔ, ՄՆԱՑՔՆԵՐԻ ԹԵՈՐԵՄԸ

11.1-Սահմանում․ $\boldsymbol{z_0}$կետը կոչվում է $f(z)$ անալիտիկ ֆունկցիայի մեկուսացված եզակի կետ, եթե $f(z)$-ը որոշված է $|z - z_0| < R$ շրջանում բացառությամբ z_0 կետից:

Այսինքն եթե $f(z)$ անալիտիկ ֆունկցիան որոշված է $0 < |z - z_0| < R$ օղակում, ապա z_0 կետը կոչվում է մեկուսացված եզակի կետ $f(z)$ անալիտիկ ֆունկցիայի համար:

Կախված կետի շրջակայքում ֆունկցիայի վարքից տարբերվում են երեք տիպի եզակիություններ

1․z_0եզակի կետն անվանում են **վերացնելի եզակի կետ**$f(z)$ անալիտիկ ֆունկցիայի համար, եթե գոյություն ունի A վերջավոր կոմպլեքս թիվ, այնպիսին որ

$$\lim_{z \to z_0} f(z) = A:$$

2․z_0կետը կոչվում է **բևեռ** $\boldsymbol{f(z)}$անալիտիկ ֆունկցիայի համար, եթե $\lim_{z \to z_0} f(z) = \infty$:

3․z_0կետը կոչվում է **էապես եզակի կետ**$\boldsymbol{f(z)}$անալիտիկ ֆունկցիայի համար, եթե գոյություն չունի $\lim_{z \to z_0} f(z)$սահմանը:

11.2-Սահմանում. $\boldsymbol{z_0} \neq \infty$կետը կոչվում է $n-$ րդ կարգի բևեռ $f(z)$ֆունկցիայի համար, եթե այն n-րդ կարգի զրո է $\varphi(z) = 1/f(z)$ֆունկցիայի համար:

$n = 1$ դեպքում բևեռն անվանում են միապատիկ, պարզ կամ սովորական բևեռ:

11.3 Թեորեմ. Որպեսզի մեկուսացված եզակի կետը լինի վերացնելի եզակի կետ $f(z)$ֆունկցիայի համար, անհրաժեշտ է և բավարար, որ գոյություն ունենա այդ կետի այնպիսի շրջակայք, որտեղ $f(z)$-ը սահմանափակ է:

11.4 Թեորեմ. Եթե z_0-ն վերացնելի եզակի կետ է $f(z)$ֆունկցիայի համար, ապա $f(z)$ֆունկցիայի Լորանի շարքը պետք է պարունակի միայն կանոնական մաս. ֆունկցիայի Լորանի շարքի գլխավոր մասը պետք է հավասար լինի զրոյի:

11.5. Թեորեմ. Որպեսզի $z_0 \neq \infty$կետը լինի լինի n-րդ կարգի բևեռ$f(z)$ ֆունկցիայի համար, անհրաժեշտ է և բավարար, որ $f(z)$-ը ներկայացվի տեսքով. $f(z) = (z - z_0)^{-n}\varphi(z)$, որտեղ $\varphi(z_0) \neq 0$:

11.6. Թեորեմ. $\boldsymbol{z_0}$վերջավոր կետը կլինի n-րդ կարգի բևեռ $f(z)$ֆունկցիայի համար այն և միայն այն դեպքում, եթե $f(z)$-ի Լորանի շարքը ունի հետևյալ տեսքը.

$f(z) = \frac{c_{-n}}{(z-z_0)^n} + \cdots + \frac{c_{-1}}{z-z_0} + c_0 + c_1(z - z_0) + \cdots$,որտեղ $c_{-n} \neq 0$:

Այսինքն ֆունկցիայի Լորանի շարքի գլխավոր մասը պետք է պարունակի միայն վերջավոր թվով անդամներ:

11.7. Որպեսզի$z_0 \neq \infty$ կետը լինի էապես եզակի կետ $f(z)$ֆունկցիայի համար, անհրաժեշտ է և բավարար, որz_0 կետի շրջակայքում Լորանի շարքի վերլուծության գլխավոր մասը պարունակի անվերջ թվով անդամներ:
11.8.(Սոխոցկի) Եթե z_0 կետը էապաես եզակի կետ է $f(z)$ֆունկցիայի համար, ապա ինչպիսին էլ լինի Aկոմպլեքս թիվը (վերջավոր կամ անվերջ) գոյություն ունի z_0-ին ձգտող այնպիսի $\{z_n\}_{n\in N}$հաջորդականություն, որ $\{f(z_n)\}_{n\in N}$-ը ձգտեն A-ին. այսինքն

$$\lim_{n\to\infty} z_n = z_0 \Rightarrow \lim_{n\to\infty} f(z_n) = A:$$

Եթե $f(z)$-ը անալիտիկ ֆունկցիա է $|z| > R > 0$տիրույթում, ապա $\sum_{n=-\infty}^{\infty} a_n z^n$ շարքին անվանում են $f(z)$-ի Լորանի շարք$z = \infty$ կետի շրջակայքում, իսկ $\sum_{n=-\infty}^{0} a_n z^n$,$\sum_{n=1}^{\infty} a_n z^n$շարքերը՝ համապատասխանաբար գլխավոր և կանոնական մասեր:

11.9$\boldsymbol{z_0} = \infty$կետը $f(z)$ֆունկցիայի համար կոչվում է վերացնելի եզակի կետ / բևեռ կամ էապես եզակի կետ/, եթե$z_0 = 0$ կետը վերացնելի եզակի կետ է /բևեռ է կամ էապես եզակի կետ/ $f^*(z) = f\left(\frac{1}{z}\right)$ ֆունկցիայի համար:

Դիցուք z_0-ն մեկուսացված եզակի կետ է $f(z)$անալիտիկ ֆունկցիայի համար:

11.10. Սահմանում. $\frac{1}{2\pi i}\oint_{\gamma} f(z)\,dz$ ինտեգրալինանվանում

են$f(z)$ անլիտիկ ֆունկցիայի **մնացքը**z_0կետում և նշանակում

են$Res_{z=z_0}f(z)$-ով՝ $\operatorname{Res}_{z=z_0} f(z)=\frac{1}{2\pi i}\oint_{\gamma} f(z)\,dz$ ։

Այստեղ γ-ն $f(z)$ −ի անալիտիկության տիրույթում ընկած կամայական փակ, ողորկ ժորդանյան կոր է, որով սահմանափակված տիրույթի ներսը և որի վրա նաև $f(z)$-ը z_0-ից բացի այլ եզակի կետեր չունի:

11.11. Թեորեմ. $\boldsymbol{f(z)}$անալիտիկ ֆունկցիայի մնացքը z_0 կետում հավասար է$0<|z-z_0|<\rho$ օղակում -$f(z)$ի Լորանի շարքի վերլուծության $(z-z_0)^{-1}$-ի գործակցին. a_{-1}՝

$$a_{-1}=\operatorname{Res}_{z=z_0} f(z)=\frac{1}{2\pi i}\oint_{\gamma} f(z)\,dz:$$

Տրվյալ կետում ֆունկցիայի մնացքը հաշվելու համր օգտվում են հետևյալ բանձևերից.

11.12. Կանոն-I. Եթե $z=z_0$ կետը վերացնելի եզակի կետ է $f(z)$ ֆունկցիայի համար, ապա $\boldsymbol{Res_{z=z_0}f(z)=0}$:

11.13. Կանոն-II. Եթե $\boldsymbol{z=z_0}$կետը n-րդ կարգի բևեռ է $f(z)$ ֆունկցիայի համար, ապա

$$Res_{z=z_0}f(z) = \frac{1}{(n-1)!}\lim_{z\to z_0}\frac{d^{n-1}}{dz^{n-1}}[(z-z_0)^n f(z)], n = 0,1,2,\cdots (0! = 1):$$

11.14. Կանոն-III. Եթե $f(z) = \frac{\omega(z)}{\varphi(z)}, \omega(z_0) \neq 0, \varphi(z_0) = 0$, իսկ $\varphi(z_0) \neq 0$,այսինքն $f(z)$-ը z_0-ում ունի պարզ բևեռ, ապա $Res_{z=z_0}f(z) = \frac{\omega(z_0)}{\varphi'(z_0)}$:

11.15.Թեորեմ.(Մնացքների հիմնական թեորեմը). Դիցուք $f(z)$ֆունկցիան անալիտիկ է D միակապ տիրույթում բացառությամբ $z_1, z_2, \ldots, z_n$ կետերից և անընդհատ է $\overline{D}$ −ում (այսինքն անընդհատ ընդհուպ մինչև ∂D *եզրագիծը*): Այդ դեպքում $\int\limits_{\partial D} f(z)dz = 2\pi i\sum_{j=1}^{n}\operatorname{Res}_{z=z_j} f(z)$:

Դիցուք $f(z)$-ը անալիտիկ է $|z| \geq R$ տիրույթում:

11.16.Սահմանում.$f(z)$ ֆունկցիայի մնացք $z = \infty$ կետում անվանում են հետևյալ թիվը՝

$\operatorname{Res}_{z=\infty} f(z) = -\frac{1}{2\pi i}\int\limits_{|z|=\rho>R} f(z)dz$, որտեղ ինտեգրումը կատարվում է բացասական ուղղությամբ:

11.17.Հատկություն.$f(z)$ ֆունկցիայի մնացքը $z = \infty$կետում հավասար է այդ կետում ֆունկցիայի Լորանի շարքի վերլուծության z^{-1}-ի գործակցին վերցրած հակառակ նշանով՝$-c_{-1}, Res_{z=\infty}f(z) = -c_{-1}$:

11.18.Հետևանք. Դիցուք $f(z)$ ֆունկցիան անալիտիկ է ընդլայնված կոմպլեքս հարթությունում բացառությամբ $z_1, z_2, \cdots, z_n, z=\infty$ կետերից: Այդ դեպքում $f(z)$ֆունկցիայի բոլոր մնացքների գումարը (ներառյալ $z=\infty$ կետը) հավասար է զրոյի.

$Res_{z=\infty} f(z) + \sum_{j=1}^{n} Res_{z=z_j} f(z), \Rightarrow Res_{z=\infty} f(z) = -\sum_{j=1}^{n} Res_{z=z_j} f(z)$:

11.19.Օրինակ. Դասակարգել $f(z) = \frac{e^{\frac{1}{z}}}{(z^2+\pi^2)^2}$ ֆունկցիայի բոլոր եզակի կետերը և հաշվել մնացքները այդ կետերում ներառյալ նաև$z=\infty$ կետը:

Քանի որ $\boldsymbol{f(z)} = \frac{e^{\frac{1}{z}}}{(z^2+\pi^2)^2} = \boldsymbol{f(z)} = \frac{e^{\frac{1}{z}}}{(z-i\pi)^2(z+i\pi)^2}$, ապա $z = \pm i\pi$ կետերը երկրորդ կարգի բևեռներ են, $z=0$-ն էապես եզակի կետ է, իսկ $z=\infty$ կետը վերացնելի եզակի կետ է ($\lim_{z\to\infty} f(z) = 0$):

$$Res_{z=i\pi} f(z) = \lim_{z\to i\pi} \frac{d}{dz}\left[\frac{\mathbf{e}^{\frac{1}{z}}}{(\mathbf{z}-\mathbf{i}\pi)^2(\mathbf{z}+\mathbf{i}\boldsymbol{\pi})^2}(\mathbf{z}-\mathbf{i}\boldsymbol{\pi})^2\right]$$
$$= \lim_{n\to\infty} \frac{-e^{1/z}\left(\frac{z+i\pi}{z^2}+2\right)}{(z+i\pi)^3} = \frac{-e^{-i/\pi}(1+i\pi)}{4\pi^4}:$$

$$\boldsymbol{Res_{z=-i\pi}f(z)} = \lim_{\mathbf{z\to i\pi}}\frac{\mathbf{d}}{\mathbf{dz}}\left[\frac{\mathbf{e^{\frac{1}{z}}}}{\mathbf{(z-i\pi)^2(z+i\pi)^2}}\mathbf{(z+i\pi)^2}\right]$$

$$= \lim_{\mathbf{n\to\infty}}\frac{-\boldsymbol{e^{1/z}}\left(\frac{\boldsymbol{z-i\pi}}{\boldsymbol{z^2}}+\mathbf{2}\right)}{\boldsymbol{(z-i\pi)^3}} = \frac{\boldsymbol{e^{i/\pi}(-1+i\pi)}}{\boldsymbol{4\pi^4}}:$$

$$Res_{z=0}f(z) = -[Res_{z=i\pi}f(z) + Res_{z=-i\pi}f(z)] = \frac{1-i\pi}{2\pi^4}\sinh\frac{i}{\pi}:$$

11.20. Օրինակ. Օգտվելով մնացքների տեսության հիմնական թեորեմից հաշվել $\int\limits_{\gamma}\frac{e^z dz}{z^2-5z+6}$ ինտեգրալը, որտեղ $\gamma = \{z \in C: |z| = 4\}$:

$$\int\limits_{\gamma}\frac{e^z dz}{z^2-5z+6} = \int\limits_{\gamma}\frac{e^z dz}{(z-3)(z-2)} = 2\pi i e^2(e-1)$$ (քանի որ $z = 2, z = 3$ կետերը գտնվում են կորով սահմանափակված տիրույթի ներսը):

342. Բերել այնպիսի ֆունկցիաների օրինակներ, որոնց համար.

Ա. $z = z_0, / z = \infty$ կետերը վերացնելի եզակի կետեր են:
Բ. $z = z_0 / z = \infty$ կետերը պարզ բևեռներ են:
Գ. $z = z_0 / z = \infty$ կետերը րդ կարգի բևեռներ են:
Դ. $z = z_0 / z = \infty$ կետերը էապես եզակի կետեր են:

343. Դիցուք $z = z_0$-ն $f(z)$ և $g(z)$ ֆունկցիաների համար համապատասխանաբար k-րդ և m-րդ կարգի բևեռ է: Ինչպիսին են հետևյալ ֆունկցիաների վարքը այդ կետում.

ա. $f(z) \pm g(z)$; բ. $f(z)g(z)$; գ. $f(z)/g(z)$:

Ինչ կարելի է պնդել դիտարկվող ֆունկցիաների մասին, եթե տրվածները համապատասխանաբար n-րդ և l-րդ կարգի բազմանդամներ են:

344.Գտնել $Res_{z=z_0}\frac{f'(z)}{f(z)}$, եթե

i. $z = z_0$ –ն n-րդ կարգի զրո է$f(z)$ֆունկցիայի համար:

ii. $\boldsymbol{z = z_0}$ –ն n-րդ կարգի բևեռ է $f(z)$ ֆունկցիայի համար:

345.Դիցուք $Res_{z=z_0}f(z) = a$: Հաշվել.

ա. $Res_{z=z_0}f^2(z)$; բ. $Res_{z=z_0}f^n(z)$:

Դիտարկել նաև այն դեպքը, երբ $z = \infty$:

Դասակարգել տրված ֆունկցիաների եզակի կետերը և հաշվել մնացքները այդ կետերում ներառյալ $z = \infty$ կետը:

346. $\boldsymbol{f(z) = \frac{e^z}{(z^2-\pi^2)^2}}$:**347.** $\boldsymbol{f(z) = \frac{e^{iz}}{(z^2+\pi^2)^2}}$:

348. $\boldsymbol{f(z) = \frac{\cosh z}{(z^2+\pi^2)^2}}$: **349.** $\boldsymbol{f(z) = \frac{\cosh 1/z}{1-z^2}}$:

350. $f(z)=\frac{\sin 1/z}{1-z^2}$: **351.** $f(z)=\frac{\sinh z}{(z^2+\pi^2)^3}$:

352. $f(z)=\frac{z^2}{1-\cos z}$: **353.** $f(z)=\frac{z^2+4}{(z^2+3z+2)^2}$:

354. $f(z)=z^3e^{-1/z}$: **355.** $f(z)=z^3\cos\frac{1}{z^2}$:

356. $f(z)=z^5\sin\frac{1}{z^2}$: **357.** $f(z)=\frac{e^{1/z}}{1-z}$:

358. $f(z)=\frac{z^3}{\sin z-z}$: **359.** $f(z)=\frac{z^{n-1}}{\sin z}, n\geq 2$:

360. $f(z)=\frac{\cos\frac{1}{z}}{z(z+1)}$: **361.** $f(z)=\frac{\cosh 1/z}{z(1+z^2)}$:

362. $f(z)=\frac{1}{1+z^2}$: **363.** $f(z)=\frac{z^2}{1+z^4}$:

364. $f(z)=\frac{z}{1+z^4}$: **365.** $f(z)=\frac{e^z}{z^3(1-z)}$:

366. $f(z)=\frac{\sin z}{(1+z^2)^2}$: **366.1** $f(z)=\frac{shz}{\left(z^2+1\right)^3}$:

367. Հաշվել $\int\limits_{\gamma}\frac{z\sin\frac{\pi}{z}dz}{z-1}$ ինտեգրալը, եթե.

ա) γ կորով սահմանափակված տիրույթը պարունակում է միայն $z=0$ կետը.

բ) γ կորով սահմանափակված տիրույթը պարունակում է միայն $z = 1$ կետը.

գ) γ կորով սահմանափակված տիրույթը պարունակում է $z = 0, z = 1$կետերը:

368. Հաշվել հետևյալ ինտեգրալները.

1) $\oint_{\gamma} z\sin\frac{z+1}{z-1}dz$; **2)**

$$\oint_{|z|=R>n}\left(a_0 + a_1 z + a_2 z^2 + \cdots + a_n z^n\right)\sum_{k=0}^{n} e^{\frac{1}{z-k}}dz:$$

3) $\oint_{\gamma} z^n e^{1/z}dz$: **4)** $\oint_{\gamma}\left(1+z+z^2\right)\left(e^{1/z} + e^{1/(1-z)} + e^{1/(2-z)}\right)dz$:

369. Առանձնացնելով բազմարժեք անալիտիկ ֆունկցիաների միարժեք ճյուղերը հաշվել հետևյալ ինտեգրալները.

1) $\oint_{|z-i|=\rho<1}\frac{dz}{Ln(z)}$;**2)** $\oint_{|z|=3}\frac{\sqrt{z}dz}{z-1}$;

3) $\oint_{|z|=3}\frac{zdz}{\sqrt{z^2+1}}$;**4)** $\oint_{|b|<|a|<|z|=R}\sqrt{(z-a)(z-b)}dz$:

Օգտվելով մնացքների տեսության հիմնական թեորեմից հաշվել հետևյալ ինտեգրալները.

370. $\oint\limits_{|z|=2} \frac{e^z dz}{z^2(z-1)}$ **371.** $\oint\limits_{|z|=2} \frac{ze^{1/z}dz}{z+3}$:

372. $\oint\limits_{|z|=2} \frac{\sin \pi z dz}{z^3 - z^2}$:**373.** $\oint\limits_{|z|=1} z^2 \sin\frac{1}{z} dz$:

374. $\oint\limits_{|z|=1} \sin \bar{z} dz$:**375.** $\oint\limits_{|z-i|=1} \frac{e^z}{z^4+2z^2+1} dz$:

376. $\oint\limits_{x^2/9+y^2/4=1} \frac{\cos z}{z^2-4} dz$:**377.** $\oint\limits_{|z|=1} e^{\bar{z}} dz$:

378. $\oint\limits_{|z|=1} z^3 \cos\frac{1}{z} dz$:**379.** $\oint\limits_{|z|=2} \frac{\sin z}{z^2(z-i)} dz$:

380. $\oint\limits_{x^2+y^2=2x} \frac{e^z}{z^3-1} dz$:**381.** $\oint\limits_{x^{2/3}+y^{2/3}=3^{2/3}} \frac{z}{(z-1)^2(z+2)} dz$:

382. $\oint\limits_{|z|=4} \frac{chz}{(z^2+\pi^2)^2} dz$:**383.** $\oint\limits_{|z|=1} \frac{1}{z^4+1} dz$:

384. $\oint\limits_{|z|=3} z^3 \sin\frac{1}{z-2} dz$:

384.1 $\oint\limits_{|z|=2} \frac{shzdz}{z^6+1}$:

12. ԱՆԻՍԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԼՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ ՄՆԱՑՔՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ: ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԼՈԳԱՐԻԹՄԱԿԱՆ ՄՆԱՑՔ, ՌՈՒՇԵԻ ԹԵՈՐԵՄԸ

$\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{f(x)dx} = \int_{-\infty}^{+\infty} \frac{\boldsymbol{P_n(x)}}{\boldsymbol{Q_m(x)}} \boldsymbol{dx}$ **տեսքի ինտեգրալների հաշվումը.**

12.1. Թեորեմ. Դիցուք տրված է $f(x) = \frac{P_n(x)}{Q_m(x)}$ֆունկցիան, որտեղ $P_n(x)$ –ը և $Q_m(x)$-ը համապատասխանաբար n –րդ և m-րդ կարգի բազմանդամներ են, ընդ որում $Q_m(x)$բազմանդամը զրո չի դառնում իրական առանցքի վրա և $m \geq n+2$: Այդ դեպքում $\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{f(x)dx} = \int_{-\infty}^{+\infty} \frac{\boldsymbol{P_n(x)}}{\boldsymbol{Q_m(x)}} \boldsymbol{dx} = \boldsymbol{2\pi i\sigma}$, որտեղ σ-ն $f(z) = \frac{P_n(z)}{Q_m(z)}$ֆունկցիայի այն բոլոր մնացքների գումարն է, որոնք գտնվում են վերին կիսահարթությունում:

$\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{R(x)\cos\lambda x\,dx}, \int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{R(x)\sin\lambda x\,dx}$ **տեսքի ինտեգրալների հաշվումը,** որտեղ$R(x)$ –ը կանոնավոր ռացիոնալ ֆունկցիա է, որը զրո չի դառնում իրական առանցքի վրա, $\lambda > 0$իրական թիվ է:

Սկզբից օգտվում ենք Ժորդանի լեմմայից.

12.2. Լեմմա (Ժորդան) Դիցուք $R(z)$կանոնավոր ռացիոնալ ֆունկցիան անալիտիկ է վերին կիսահարթության մեջ՝ $0 < \arg(z) < \pi$, բացառությամբ $z_1, z_2, \cdots, z_n$ կետերից և $\lim_{|z|\to\infty} R(z) = 0$:Այդ դեպքում $\lim_{\rho\to\infty} \int_{C_\rho} R(z)e^{i\lambda z}dz = 0$, որտեղ

C_ρ-ը վերին կիսահարթությունում ընկած $O(0,0)$ կենտրոնով և ρ շառավղով կիսաշրջանն է, իսկ $\lambda > 0$:

12.3 Հետևանք. $\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{e^{i\lambda x}R(x)dx = 2\pi i\sigma}$,որտեղ **λ**>0, $R(x)$-ը բավարարում է Ժորդանի լեմմայի պայմաններին, իսկ σ-ն $e^{i\lambda x}R(x)$ ֆունկցիայի վերին կիսահարթությունում ընկած բոլոր մնացքների գումարն է:

12.4. Դիտողություն. Եթե **λ**<0, ապա փոխարինելով C_ρկոնտուրը OX առանցքի նկատմամբ նրան համաչափ $C_{\rho-}$ կոնտուրով, կստացվի հետևյալ բանաձևը.

$$\int_{-\infty}^{+\infty} e^{i\lambda x}R(x)dx = -2\pi i \sum_{Imz_{k<0}} Res_{z=z_k} e^{i\lambda x}R(x):$$

12.5. Դիտողություն. Եթե $R(x)$ ֆունկցիան իրական է x-երի և $\lambda > 0$ համար, ապա $\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{e^{i\lambda x}R(x)dx} =$ $\boldsymbol{2\pi i\sigma}$հավասարության մեջ առանձնացնելով իրական և կեղծ մասերը կստանանք.

$$\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{R(x)\cos\lambda x\,dx} = -2\pi \mathrm{Im}\left[\sum_{Imz_k>0} Res_{z=z_k}\left(e^{i\lambda z}R(z)\right)\right]:$$

$$\int_{-\infty}^{-\infty} \boldsymbol{R}(\boldsymbol{x}) \sin \lambda x \, \boldsymbol{dx}$$

$$= 2\pi \mathrm{Re} \left[\sum_{Imz_k>0} Res_{z=z_k} \left(e^{i\lambda z} R(z) \right) \right]:$$

12.6 Սահմանում. $(\ln \boldsymbol{f}(\boldsymbol{z}))' = \frac{\boldsymbol{f}'(\boldsymbol{z})}{\boldsymbol{f}(\boldsymbol{z})}$ֆունկցիայի մնացքները կոչվում են $f(z)$ ֆունկցիայի լոգարիթմական մնացքներ:

12.7 Թեորեմ (***Ռուշեի***)Դիցուք $f(z)$ և $g(z) = f(z) + \varphi(z)$ ֆունկցիաները անալիտիկ են կոմպլեքս հարթության D տիրույթում և նրա եզրագծի՝ ∂D, վրա տեղի ունի $|f(z)| > |\varphi(z)|$ անհավասարությունը: Այդ դեպքում $f(z)$ և $g(z)$ ֆունկցիաները D տիրույթում ունեն միևնույն քանակով զրոներ (*յուրաքանչյուրզրոհաշվածիրպատիկությամբ*):

12.8 Օրինակ. Հաշվել հետևյալ ինտեգրալները.

Ա. $\int_{-\infty}^{+\infty} \frac{\boldsymbol{dx}}{\boldsymbol{x^8+1}}$,**Բ.** $\int_{-\infty}^{+\infty} \frac{\boldsymbol{\cos ax dx}}{\boldsymbol{x^2+b^2}}, \boldsymbol{a} > 0, b > 0$:

Լուծում. Ա. Համաձայն 12.1 թեորեմի $\int_{-\infty}^{+\infty} \frac{\boldsymbol{dx}}{\boldsymbol{x^8+1}} = \boldsymbol{2}\pi i\sigma$,որտեղ σ −ն $f(z) = \frac{1}{z^8+1}$ ֆունկցիայի բոլոր մնացքների գումարն է, որոնք գտնվում են վերին կիսահարթությունում: Նկատենք, որ նշված ֆունկցիայի եզակի կետերը $z^8 + 1 = 0$ հավասարման արմատներն են, որոնք հանդիսանում են պարզ բևեռներ ֆունկցիայի համար և որոնցից միայն չորս եզակի

կետեր են գտնվում վերին կիսահարթությունում. $z_0 = \cos\frac{\pi}{8} + i\sin\frac{\pi}{8}$, $z_1 = \cos\frac{3\pi}{8} + i\sin\frac{3\pi}{8}$,

$$z_2 = \cos\frac{5\pi}{8} + i\sin\frac{5\pi}{8},\ \ z_3 = \cos\frac{7\pi}{8} + i\sin\frac{7\pi}{8}:$$

Համաձայն պարզ բևեռները հաշվելու 11.14 կանոնի.

$\sigma = \frac{1}{8}\left[\frac{1}{z_0^7} + \frac{1}{z_1^7} + \frac{1}{z_2^7} + \frac{1}{z_3^7}\right] = \frac{1}{8}\left[\cos\frac{7\pi}{8} - i\sin\frac{7\pi}{8} + \cos\frac{5\pi}{8} - i\sin\frac{5\pi}{8} + \cos\frac{3\pi}{8} - i\sin\frac{3\pi}{8} + \cos\frac{\pi}{8} - i\sin\frac{\pi}{8}\right] = \frac{1}{32i\cos\frac{\pi}{8}}$: Հետևաբար որոնելի ինտեգրալը հավասար է. $\frac{\pi}{16\cos\frac{\pi}{8}} = \frac{\pi}{8\sqrt{2+\sqrt{2}}} = \frac{\pi\sqrt{2\sqrt{2}-2}}{16}$:

Լուծում Բ. Համաձայն 12.5 դիտողության պետք է գտնել $f(z) = \frac{e^{iaz}}{z^2+b^2}$ ֆունկցիայի բոլոր մնացքների գումարը, որոնք գտնվում են վերին կիսահարթությունում: Այն միայն մեկն է՝ $z_0 = ib$ և $Res_{z=z_o}f(z) = \frac{-ie^{-ab}}{2b}$: Հետևապաես $\int_{-\infty}^{+\infty}\frac{\cos axdx}{x^2+b^2} = \frac{\pi e^{-ab}}{b}$:

Հաշվել հետևյալ անիսկական ինտեգրալները.

385. $\int_0^\infty \frac{dx}{x^4+1}$: **386.** $\int_0^\infty \frac{x^2dx}{x^4+1}$:

387. $\int_{-\infty}^{\infty} \frac{x^2 dx}{(x^2+1)(x^4+1)}$: 388. $\int_0^{\infty} \frac{dx}{x^6+1}$:

389. $\int_{-\infty}^{\infty} \frac{dx}{x^4+16}$:390. $\int_0^{\infty} \frac{x^2+1}{x^4+1} dx$:

391. $\int_0^{\infty} \frac{dx}{(x^2+1)^2}$: 392. $\int_0^{\infty} \frac{dx}{(x^2+1)^3}$:

393. $\int_0^{\infty} \frac{dx}{(x^2+1)^n}, n \in N$: 394. $\int_{-\infty}^{\infty} \frac{xdx}{(x^2+4x+13)^2}$:

395. $\int_0^{\infty} \frac{x^2 dx}{x^8+1}$: 396. $\int_0^{\infty} \frac{dx}{(x^2+a^2)(x^2+b^2)^2}, a, b > 0$:

397. $\int_0^{\infty} \frac{x \sin 2x dx}{x^4+1}$: 398. $\int_{-\infty}^{\infty} \frac{x \cos x dx}{x^2-2x+10}$:

399. $\int_{-\infty}^{\infty} \frac{x \sin 3x dx}{x^2+2x+5}$: 400. $\int_0^{\infty} \frac{\cos x dx}{(x^2+1)(x^2+4)}$:

401. $\int_0^{\infty} \frac{x \sin \alpha x dx}{(x^2+a^2)(x^2+b^2)}$ $a, b, \alpha > 0$:402. $\int_{-\infty}^{\infty} \frac{\cos \alpha x dx}{(x^2+a^2)^2}, a, \alpha > 0$:

403. $\int_{-\infty}^{\infty} \frac{(x-2) \cos 4x dx}{x^2-4x+5}$:404. $\int_0^{\infty} \frac{\cos 2x dx}{x^2+9}$:

405. $\int_0^{\infty} \frac{x \sin x/2 dx}{x^2+4}$:406. $\int_{-\infty}^{\infty} \frac{x \sin 2x dx}{x^2+4x+20}$:

407. $\int_{-\infty}^{\infty} \frac{x \cos 4x dx}{x^2-2x+26}$:407.1 $\int_0^{\infty} \frac{x \sin x}{x^4+2x^2+1} dx$:

Հաջորդ առաջադրանքներում ընդունելով $|z| = 1$ և նշանակելով $z = e^{i\varphi}, \int_0^{2\pi} R(\cos\varphi, \sin\varphi) d\varphi$ տեսքի ինտեգրալները, որտեղ $R(\cos\varphi, \sin\varphi)$ ռացիոնալֆունկցիա է $\cos\varphi - ի \sin\varphi - ի$ նկատմամբ, բերել

$$\int\limits_{|z|=1} R\left[\frac{1}{2}\left(z+\frac{1}{z}\right),\frac{1}{2i}\left(z-\frac{1}{z}\right)\right]\frac{dz}{iz}$$ տեսքի և հաշվել.

408. $\int_0^{2\pi}\frac{d\varphi}{1-2r\cos\varphi+r^2}, \mathbf{0}<r<1$:409. $\int_0^{2\pi}\frac{d\varphi}{a+\cos\varphi}, \boldsymbol{a}>1$:

410. $\int_0^{2\pi}\frac{d\varphi}{(a+\cos\varphi)^2}, \boldsymbol{a}>1$:411.$\int_0^{2\pi}\frac{d\varphi}{a-\cos\varphi}, \boldsymbol{a}>1$:

412. $\int_0^{2\pi}\frac{\sin 2\varphi d\varphi}{1-2r\cos\varphi+r^2}, -\mathbf{1}<r<1$:413. $\int_0^{2\pi}\frac{\cos\varphi d\varphi}{1-2r\sin\varphi+r^2}, \mathbf{0}<r<1$:

414.$\int_0^{2\pi}\frac{\sin^4\varphi d\varphi}{1+\sin^2\varphi}$:414.1 $\int\limits_0^{\pi/2}\frac{d\varphi}{a^2+\sin^2\varphi}$:

414.2 $\int\limits_0^{\pi/2}\frac{d\varphi}{\left(a^2+\cos^2\varphi\right)^2}$:

414.3 $\int\limits_0^{\pi/2}\frac{d\varphi}{\left(a^2+\sin^2\varphi\right)^2}$:

Գտնել տրված բազմանդամների զրոների քանակը նշված տիրույթներում.

415. $P(z)=z^9-2z^6+z^2-8z-2, \{z\in C: |z|\le 1\}$:

416. $P(z)=2z^5-z^3+3z^2-z+8, \{z\in C: |z|\le 1\}$:

417. $P(z)=z^7-5z^4+z^2-2, \{z\in C: |z|\ge 1\}$:

418. $P(z)=z^4-5z+1, \{z\in C: 1\le |z|\le 2\}$:

419. $P(z)=z^5+2z^2+8z, \{z\in C: |z|\le 1\}$:

420. $\boldsymbol{P(z) = z^8 - 5z^5 + 2z^2 - 1,\ \{z \in C: |z| \leq 1\}}$:

421. $\boldsymbol{P(z) = z^3 - 5z + 1,\ \{z \in C: |z| \leq 1\}}$:

422. $\boldsymbol{P(z) = z^3 - 5z + 1,\ \{z \in C: 1 \leq\ |z| \leq 1\}}$:

423. $\boldsymbol{P(z) = z^3 - 5z + 1,\ \{z \in C: 2 \leq |z| \leq 3\}}$:

Գտնել տրված ֆունկցիաների լոգարիթմական մնացքները.

424. $\boldsymbol{f(z) = \frac{\sin z}{z+2}, |z| = 1}$կոնտուրի նկատմամբ:

425. $\boldsymbol{f(z) = (e^z - 2)^2, |z| = 8}$կոնտուրի նկատմամբ:

426. $\boldsymbol{f(z) = \tanh z\,, |z| = 5}$կոնտուրի նկատմամբ:

427. $\boldsymbol{f(z)} = \tan^2 z\,, \boldsymbol{|z| = 3}$կոնտուրի նկատմամբ:

A. ԽԱՌԸ ԽՆԴԻՐՆԵՐ

428. Դիցուք $C_+ \coloneqq \{z = x + iy \in C: Imz = y > 0\}$ վերին կիսահարթությունն է: Ցույց տալ. Ա.- $\{z \in C_+ \Leftrightarrow -1/z \in C_+\}$, Բ. – Դիցուք $z, w \in C$: Ցույց տալ, որ$|1 - z\overline{w}|^2 - |z - w|^2 = (1 - |z|^2)(1 - |w|^2)$

Ստացված հավասարությունից ելնելով ցույց տալ, որ եթե $|w| < 1$, ապա $|z| < 1 \Leftrightarrow \left|\frac{z-w}{1-z\overline{w}}\right| < 1$, և $|z| = 1 \Leftrightarrow \left|\frac{z-w}{1-z\overline{w}}\right| = 1$:

429. Ցույց տալ հետևյալ անհավասարությունները.

Ա․- $\frac{|x|+|y|}{\sqrt{2}} \leq |z| = \sqrt{x^2+y^2} \leq |x|+|y|$

Բ. -$max\{|x|,|y|\} \leq |z| \leq \sqrt{2}max\{|x|,|y|\}$։

430. Դիցուք ($\boldsymbol{z}$)և($\boldsymbol{w}$)կոմպլեքս թվերի դաշտեր են։ Գտնել այն բոլոր

$w = \varphi(z)$արտապատկերումները, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին․

$$1.\, \varphi(z_1+z_2) = \varphi(z_1)+\varphi(z_2),$$

$$2.\, \varphi(z_1 z_2) = \varphi(z_1)\varphi(z_2), \qquad 3.\, \varphi(x) = x \quad \text{բոլոր} \quad x \in R$$

համար։

431. Ապացուցել, որ ցանկացած $z \in S^1 \backslash \{-1\} = \{z \in C\text{:}\, |z| = 1\} \backslash \{-1\}$կոմպլեքս թիվ կարելի է միարժեք ձևով ներկայացնել հետևյալ տեսքով․

$$z = \frac{1+i\tau}{1-i\tau} = \frac{1-\tau^2}{1+\tau^2} + i\frac{2\tau}{1+\tau^2}, \quad \textit{որտեղ}\ \tau \in R\text{:}$$

432. Ցույց տալ, որ ամբողջ թիվ է և գտնել այդ թիվը։

433. Գտնել հետևյալ աստիճաններն ու արմատները.

ա. $1^{\sqrt{2}}$ **բ.** i^i **գ.** $\left(\frac{1}{2}+i\frac{\sqrt{3}}{2}\right)^{\sqrt{3}}$ **դ.** $\left(\frac{1-i}{\sqrt{2}}\right)^{1+i}$ **ե.** $\sqrt{\mathbf{2-2\sqrt{3}}\boldsymbol{i}}$ **զ.** $\sqrt[5]{\sqrt{\mathbf{2}}\left(\mathbf{cos}\frac{\boldsymbol{\pi}}{\mathbf{6}}+\mathbf{sin}\frac{\boldsymbol{\pi}}{\mathbf{6}}\right)}$

434. Դիցուք $z_0 = x_0 + y_0 \neq 0$ որևէ կոմպլեք թիվ է: $\{z_n\}_{n\geq 0}$ հաջորդականությունը սահմանվում է ռեկուրենտ հետևյալ կերպ. $z_{n+1} = \frac{1}{2}\left(z_n + \frac{1}{z_n}\right), n \geq 0$: Ցույց տալ.

Եթե $x_0 > 0$, ապա $\lim_{n\to\infty} z_n = 1$:

Եթե $x_0 < 0$, ապա $\lim_{n\to\infty} z_n = -1$:

Եթե $x_0 = 0$, ապա $\{z_n\}_{n\geq 0}$ հաջորդականությունը կամ տարամետ է կամ սահմանված չէ:

435. Դիցուք $\{z_n\}_{n\geq 0}$ հաջորդականությունը սահմանվում է ռեկուրենտ հետևյալ կերպ . $z_{n+1} = \frac{1}{2}\left(z_n + \frac{a}{z_n}\right), n \geq 0, z_0 \in C$: Ինչպիսի z_0 դեպքում է տվյալ հաջորդականությունը զուգամետ: (Դիտարկել $\frac{z_{n+1}-\sqrt{a}}{z_{n+1}+\sqrt{a}}$):

436. Ապացուցել, որ

Ա. բոլոր $z \in C$ համար $|e^z - 1| \leq e^{|z|} - 1 \leq |z|e^{|z|}$:

Բ. բոլոր $z \in C, |z| \leq 1$ համար $|e^z - 1| \leq 2|z|$:

Գ. բոլոր $z \in C, 0 < |z| < 1$ -երի համար $\frac{1}{4}|z| < |e^z - 1| < \frac{7}{4}|z|$:

437. Դիցուք $\{z_n\}_{n\geq 1}$ կոմպլեքս թվերի հաջորդականություն է և $\{S_n\}_{n\geq 1} = \sum_{k=1}^{n} z_k$ դրա մասնական գումարների հաջորդականությունն է․ Այնուհետև $\sigma_n = \frac{S_1+S_2+\cdots+S_n}{n}, n \geq 1$: Ցույց տալ, որ եթե $\{S_n\}_{n\geq 1}$ հաջորդականությունը զուգամետ է և $S = \lim_{n\to\infty} S_n$, ապա $\{\sigma_n\}_{n\geq 1}$ հաջորդականությունը նույնպես զուգամետ է և $\lim_{n\to\infty} \sigma_n = S$:

438. Ապացուցել հետևյալ անվերջ արտադրյալների բացարձակ զուգամիտությունը․

1 . $\prod_{n=1}^{\infty}(1+z^n), |z|<1$; 2 . $\prod_{n=1}^{\infty}\left(1-\frac{z^2}{n^2\pi^2}\right), z \in C$; 3 . $\prod_{n=1}^{\infty}\left(\mathbf{1}-\frac{z}{n}\right)e^{z/n}, z \neq \mathbf{1}, \mathbf{2}, \cdots$:

439. Ցույց տալ, որ $\prod_{k=1}^{n} \sin\frac{k\pi}{n+1} = \frac{n+1}{2^n}$:

440. Ապացուցել, որ եթե $\boldsymbol{P(z) = a_0 + a_1 z + a_2 z^2 + \cdots + a_{n-1} z^{n-1} + z^n}$ բազմանդամն ունի n հատ իրական արմատներ, ապա $\boldsymbol{Q(z) = P(z+ai) + P(z-ai)}$ բազմանդամը, որտեղ a-ն կամայական իրական թիվ է, ևս ունի n հատ իրական արմատներ:

441. Ապացուցել, որ w կետը գտնվում է z_1և z_2 կետերը միացնող հատվածի վրա այն և միայն այն դեպքում, եթե գոյություն ունի $\alpha \in [0;1]$ իրական թիվ, այնպիսին որ $w = \alpha z_1 + (1-\alpha) z_2$:

442. Դիցուք $z_1, z_2, \cdots, z_n \in C$ կոմլեքս թվեր են: Ապացուցել, որ

$\frac{1}{\sqrt[q]{n}}\sum_{k=1}^{n}|z_k| \le (\sum_{k=1}^{n}|z_k|^p)^{1/p} \le \sqrt[p]{n}\max_k|z_k|$, որտեղ $\frac{1}{p}+\frac{1}{q}=1, p>1$:

443.Գտնել կոմպլեքս հարթության M բազմության պատկերը նշված արտապատկերումների միջոցով.

1. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: \boldsymbol{Im}(\boldsymbol{z})=\boldsymbol{1}\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{z}-\boldsymbol{1}}{\boldsymbol{z}+\boldsymbol{1}}$:

2. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: |\boldsymbol{z}+\boldsymbol{1}|=\boldsymbol{1}\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{1}}{\boldsymbol{z}}$:

3. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: |z|=\boldsymbol{2}\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{z}}{\boldsymbol{z}+\boldsymbol{1}}$:

4. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: \boldsymbol{Im}(\boldsymbol{z})=\boldsymbol{1}\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{z}-\boldsymbol{1}}{\boldsymbol{z}+\boldsymbol{1}}$:

5. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: \boldsymbol{Re}(\boldsymbol{z})>0\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{z}-\boldsymbol{2}}{\boldsymbol{z}+\boldsymbol{2}}$:

6. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: |z|=\boldsymbol{1}, \boldsymbol{0}\le \boldsymbol{arg}(\boldsymbol{z})\le\boldsymbol{\pi}/\boldsymbol{4}\}$, $\boldsymbol{w}=\boldsymbol{z}^{\boldsymbol{4}}$:

7. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: \boldsymbol{Im}(\boldsymbol{z})=\boldsymbol{1}\}$, $\boldsymbol{w}=\boldsymbol{z}^{\boldsymbol{2}}$:

8. $\boldsymbol{M}=\{\boldsymbol{z}\in\boldsymbol{C}: |\boldsymbol{z}|=\boldsymbol{2}\}$, $\boldsymbol{w}=\frac{\boldsymbol{1}}{\boldsymbol{2}}\left(\boldsymbol{z}+\frac{\boldsymbol{1}}{\boldsymbol{z}}\right)$:

444. Ապացուցել որ, եթե $|z_1|=|z_2|=|z_3|=1 \,\&\, z_1+z_2+z_3=0$, ապա z_1, z_2, z_3 կետերը գտնվում են միավոր շրջանագծին ներգծած կանոնավոր եռանկայն գագաթներում:

445. Օգտվելով Մուավրի բանաձևից $\cos nx$ -ը և $\sin nx$ -ը արտահայտել $\cos x$ -ի, $\sin x$ -ի և դրանց աստիճանների միջոցով:

446. Դիցուք $z=\cos\varphi+i\sin\varphi$: Ապացուցել.

Ա. –Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդով ապացուցել Մուավրի բանաձևը. $\left(\cos\varphi+i\sin\varphi\right)^n=\cos n\varphi+i\sin\varphi, n\in\mathbb{N}$;

Բ.- Ցույց տալ, որ $z^n+\dfrac{1}{z^n}=2\cos n\varphi$;

Գ.-Պարզեցնելով $\left(z+\dfrac{1}{z}\right)^n$ արտահայտությունը ցույց տալ, որ $\cos^4\varphi=\dfrac{1}{8}\left(\cos4\varphi+4\cos2\varphi+3\right)$;

Դ.-Դիցուք $h(c)=\int\limits_0^c\cos^4\varphi d\varphi$, $x\in(0;\pi)$: Հաշվել $h(c)$-ն և լուծել $h(c)=\dfrac{3}{8}c$ հավասարումը:

Ե.- Բացել $\left(z+\dfrac{1}{z}\right)^6$ փակագծերը և պարզեցնելով այն գտնել a,b,c,d իրական թվերը, որտեղ $\cos^6\varphi=a\cos6\varphi+b\cos4\varphi+c\cos2\varphi+d$, այնուհետև հաշվել $\int\limits_{\pi/4}^{\pi/2}\cos^6\varphi d\varphi$ ինտեգրալը:

Զ. –Ցույց տալ, որ $\cos5\varphi=16\cos^5\varphi-20\cos^3\varphi+5\cos\varphi$:

447. i.- Գտնել $z^{16}-1=0$ հավասարման այն արմատները, որոնք գտնվում են առաջին քառորդում և դրանք ներկայացնել ցուցչային տեսքով:

ii.-Ցույց տալ, որ $\operatorname{Re}S=\operatorname{Im}S$, որտեղ S –ը **i**–ում գտած հավասարման արմատների գումարն է:

iii.- Ցույց տալ, որ $S=\dfrac{1+i}{2}\left(\sqrt{2+\sqrt{2}}+\sqrt{2}+\sqrt{2+\sqrt{2}}\right)$:

448. $P(x)=ax^3+bx^2+cx+d$ բազմանդամը, որտեղ $a,b,c,d\in\mathbb{}$ ունի երկու զրոներ՝ z,w:

i.- Ցույց տալ, որ $z=(1-i)^3+(1+i)^3=-4$:

ii.- Գտնել $w=\dfrac{i^{64}\times i^{63}\times\cdots\times i^{18}}{1-2i}$ և այն ներկայացնել հանրահաշվական տեսքով:

iii. – Գտնել այդպիսի $P(x)$ բազմանդամը, որի գործակիցները պարզ թվեր են:

449. i. Ցույց տալ, որ $\dfrac{(1+i)^{2023}}{(1-i)^{2021}}$ թիվը ամբողջ թիվ է և գտնել նրա արժեքը:

ii.- Գտնել $n \in \mathbb{Z}$ ամբողջ թիվն այնպես, որ $\dfrac{(1+i)^{n+2}}{(1-i)^{n}}$ թիվը լինի կեղծ թիվ:

450. Գտնել z և w կոմպլեքս թվերն այնպես, որ

$$\begin{cases} \overline{z} - iw = 3 \\ \overline{w} + iz = 6 - i \end{cases} :$$

451. Դիցուք z_1 –ը և z_2 -ը $z^2 - z + 1 = 0$ հավասարման արմատներն են: Հաշվել $z_1^{2021} - z_2^{2021}$ արտահայտության արժեքը:

452. Ցույց տալ, որ $w\overline{z} - z\overline{w}$ արտահայտության իրական մասը զրո է, ցանկացած $z, w \in \mathbb{C}$ կոմպլեքս թվերի համար:

453. $P(z) = z^4 - 8z^3 + 48z^2 - 176z + 260$ բազմանդամի զրոնեից մեկը $(3-i)$-ն է, գտնել այդ բազմանդամի մյուս զրոները:

454. Գտնել a թիվն այնպես, որ $\arg z = 1$, որտեղ $z = (a+2i)^2$:

456. Ցույց տալ, որ $\left(\sqrt{3}+i\right)^n + \left(\sqrt{3}-i\right)^n = 2^{n+1}\cos\dfrac{n\pi}{6}, n \in \mathbb{N}$:

457. Պարզեցնել i.- $\left(1+\omega+\overline{\omega}\right)^2$, ii.- $\left(1+\omega+3\omega^2\right)^2$, iii.- $\left(1+2\omega+3\omega^2\right)\left(1+3\omega+2\omega^2\right)$ արտահայտության արժեքները, որտեղ ω-ն $z^3-1=0$ հավասարման այն արմատներն են, որոնք տարբեր են 1-ից:

